

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446



## ՓԱՌՔ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ



Հայկական բանակի օրհնումը Սարդարապատի  
ճակատամարտից առաջ

# 223, Մայիս 2017 թ. No 223, May 2017 شماره ۲۲۳ خرداد ماه ۱۳۹۶

# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Իմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....5
- 4- Սփյուռք.....6
- 5- Միջազգային.....7
- 6- Հասարակական.....7
- 7- Մշակույթ.....15

## Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-3
- Լոռիի անեկտոտները.....4

**Շապիկի առաջին էջում՝ «Մայիսյան»**

**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը  
Համար 223, Մայիս 2017 No. 223, May 2017  
ماهنامه لویس - شماره ۲۲۳ خرداد ماه ۱۳۹۶

## Մշակութային և Հասարակական Ամսագիր

### ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝  
**Էդ. Բաղդասարյան**  
**Իմբագրական կազմ՝**

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,  
Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խելչումյան  
**Փոստակից 15875-9488 Թեհրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

### LOUYS

#### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
պարտադիր է:

### ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

## Հայաստանը նշում է Առաջին Հանրապետության օրը



Հայաստանն մայիսի 28-ին, նշում է Առաջին  
Հանրապետության օրը: 1918թ. մայիսին հայկական  
կանոնավոր ուժերը եւ կամավորները կարողացան կյանքի  
ու մահու համար մղվող պայքարում փայլուն հաղթանակ  
տանել թվաքանակով անհամեմատ ավելի շատ  
թուրքական ուժերի նկատմամբ՝ թույլ չտալով նրանց  
ներխուժումը Երեւան:

Հաղթանակը հայ ժողովրդին թույլ տվեց  
վերականգնել դարեր առաջ կորցրած պետականությունը:  
Ուղիղ 99 տարի առաջ Թիֆլիսում Հայ ազգային  
խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունն ու  
Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը:  
«Անդրկովկասի քաղաքական ամբողջականության  
անկումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի կողմից  
անկախության հռչակմամբ պայմանավորված՝ Հայկական  
ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական  
գավառների գերագույն եւ միակ իշխանություն», - հենց  
այդ ձեւակերպումն է տեղ գտել Հայաստանի  
Անկախության հռչակագրում:

Անգնահատելի է Հայաստանի Առաջին Հանրա-  
պետության դերը պետական կառավարման մարմինների  
ստեղծման գործում: Հայաստանի անկախ Հանրապե-  
տությունը կարճ կյանք ունեցավ եւ Հայաստանը  
խորհրդայնացվեց 1920 թվականի նոյեմբերի 29-ին, ապա  
խորհրդային Հայաստանը հիմնադրվեց Առաջին  
Հանրապետության հիմքերի վրա, որի գոյատևման  
ընթացքում Հայ ժողովուրդը կարողացավ վերակառուցել  
իր պետականության կարևորագույն կառույցները, իր  
դարավոր մշակույթն ու Մայր Հայրենիքը և 1991-ի  
սեպտեմբերին հայտարարեց իր ամողջական  
անկախությունն ու հիմք դնել Երրորդ  
Հանրապետությունը:

Ավանդաբար մայիսի 28-ին հիմնական  
միջոցառումներն անցկացվում են Մարդարապատում,  
որը հավերժացնում է հայ ժողովրդի հերոս գավակների  
հիշատակը, որոնք 1918թ-ին կանգնեցրին թուրքերի  
ներխուժումը երկիր:

## Հայաստանի Հանրապետություն

### Երևանում մեկնարկել է «Ավորա» մրցանակաբաշխությունը



Երևանում մեկնարկել է «Ավորա» ամենամյա երկրորդ մրցանակաբաշխությունը:

Մրցանակաբաշխությունը վարում է The Washington Post օրաթերթի նշանավոր լրագրող, գրող հայկական ծագմամբ Դեյվիդ Իզնատիուսը:

Մրցանակաբաշխությանը ելույթ է ունեցել նախորդ տարվա մրցանակակիր Բուրունդիից Մարգարեթ Բարանկիցեն:

Այնուհետև ֆիլմ է ցուցադրվել նախորդ տարի «Ավորա» մրցանակաբաշխության համանախագահ Էլի Վիզելի մասին, ով 2016 հուլիսին մահացել է: Էլի Վիզելն իր ողջ կյանքը նվիրել է հումանիտար խնդիրները վերհանելուն ու լուծելուն:

Նա պայքարել է անհանդուրժողականության դեմ ու պաշտպան կանգնել անարդարությանը մատնված ԽՍՀՄ-ում բնակվող հրեաներին, Նիկարագուայի միսիստո հնդկացիներին, Արգենտինայում «կեղտոտ պատերազմի» ժամանակ անհետացածներին, կամբոջացի փախստականներին, Աֆրիկայում սովի ու ցեղասպանության զոհերին, Հարավաֆրիկյան Հանրապետությունում ապարտեիդի (ռասայական խտրականություն) ու նախկին Հարավսլավիայում պատերազմի զոհերին. և սա դեռ ամբողջական ցանկը չէ:

Նշենք, որ «Ավորա» մրցանակը շնորհվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից եւ ի երախտագիտություն նրանց, ովքեր փրկության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին: Մրցանակին արժանանում է այն հերոսը, որն օգնում է մարդկանց՝ անձնվիրաբար եւ բացառիկ ջանքերով:

«Ավորա» մարդասիրական համաշխարհային մրցանակն ամեն տարի շնորհվում է նրան, ով անձնվիրաբար օգնում է մարդկանց: Դափնակիրները ճանաչման են արժանանում իրենց արարքների բացառիկ ազդեցության եւ նշանակության համար: Այս տարի մրցանակին հավակնում են Սոմալիում Խաղաղության եւ մարդու իրավունքների Էլման կենտրոնի հիմնադիրներ Ֆարթուն Ադանն ու Էլվադ Էլմանը, Նուր պոտենցիալի եւ կրթական համակարգի զարգացման կազմակերպության նախագահ Ջամիլիա Աֆղանին, Սուդանի Mother of Mercy հիվանդանոցի վիրաբույժ Թոմ Կատինան, Սիրիայում դաշտային հոսպիտալի բժիշկ Մուհամմադ Դարվիշը, Կոնգոյի Դեմոկրատական հանրապետությունից վիրաբույժ-գինեկոլոգ, հիվանդանոց հիմնադրած դոկտոր Դենիս Մուկվեզեն:

Նրանցից մեկը «Ավորա 2017»-ի մրցանակակիր կդառնա եւ 100 հազար դոլարի չափով դրամաշնորհ կստանա՝ սեփական գործունեությունն իրականացնելու համար եւ 1 մլն դոլար մրցանակ՝ իրեն ոգեշնչած կազմակերպությանն աջակցելու համար:

Մրցանակաբաշխությանը մասնակցելու համար Հայաստան է ժամանել աշխարհահռչակ շանսոնյե Շարլ Ազնավուրը: Սերժ Սարգսյանն այսօր նախագահական նստավայրում թեյի սեղանի շուրջ հյուրընկալել է Մադրիդյան ակումբի և «Ավորա» մրցանակաբաշխության ընտրող հանձնաժողովի ներկայացուցիչներին:

### Հայաստանում ևս բացել ենք մատնական օթյակ, որը կաշխատի հավասարություն, եղբայրություն, ազատություն սկզբունքներով. Ֆրանսիայի «Մեծ Արևելք» կազմակերպության Մեծ վարպետ



Աշխարհը կառավարելը թողնում ենք քաղաքական գործիչներին և քաղաքականությանը, իսկ մատնության նպատակն է հասարակությանը հետաքրքրող հարցերին մոտենալ փիլիսոփայական և բարոյական տեսանկյունից: Այս մասին երեկ՝ «Կենտրոն» հեռուստաընկերության թերթում, Պետրոս Ղազարյանի հեղինակային «Ուրվագիծ» հաղորդաշարին հայտարարեց հաղորդման հյուրը՝ Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մատնական կազմակերպության ղեկավար, Մեծ վարպետ Քրիստոֆ Աբբասը՝ ի պատասխան դիտարկման, որ շարքային քաղաքացիների մոտ կա համոզում, որ մատնները գաղտնի կառավարում են աշխարհը:

Մեծ վարպետը ընդհանուր գծերով փորձեց ներկայացնել ինչ է մատնությունը, ինչու են եկել Հայաստան: «Ֆրանկ-մատնները կանանց և տղամարդկանց հավաք է, որոնք, միասին հետևելով ընդունված ավանդույթներին, ծիակարգերին, փիլիսոփայորեն են մոտենում տարբեր խնդիրների և մտածում են հասարակությանը անհանգստացնող տարբեր հարցերի մասին», - ներկայացրեց Մեծ Վարպետը:

Իսկ հարցին, թե, այսինքն, կարելի՞ է հասկանալ, որ ինչպես հին Հունաստանում մարդիկ հավաքվում էին, խորհում փիլիսոփայական հարցերի շուրջ, Մեծ վարպետ Քրիստոֆ Աբբասը նկատեց. «Դա միաժամանակ և՛ փիլիսոփայական դպրոց է, և՛ իմաստության, և՛ բարոյականության»: Հաջորդ ճշտող հարցին՝ այսինքն՝ «հավաքվում եք, սուրճ եք խմում, խոսում կյանքից ու գնում տո՛ւն», Մեծ վարպետը պատասխանեց. «Այնքան էլ չէ, նախատեսված են մատնական հավաքներ, որոնց ժամանակ նաև տեղի է ունենում կանոնակարգում, այսինքն՝ գրանցվում են բոլոր

ելույթները, որից հետո դուրս են բերվում օրակարգի բոլոր հարցերը, որոնք այնուհետև քննարկվում են»:

Այս պատասխանը կրկին չբավարարեց հաղորդման հեղինակին, որը հետաքրքրվեց՝ ունե՞ն քաղաքական, տնտեսական և այլ շահեր, թե՞ հանդիպումները կազմակերպվում հենց այնպես՝ հանդիպումների համար, որովհետև շատերն են ընկերներով հավաքվում, քննարկում բարոյական, փիլիսոփայական հարցեր, բայց նրանք մասն չեն:

«Խնդիրն այն է, որ մասոնական կազմակերպությունն ունի շուրջ 3-դարյա պատմություն և, եթե ընկերներով հավաքվում եք, դուք բավականին ազատ եք, խոսում եք, արտահայտում եք այն մտքերը, որոնք ցանկանում եք հայտնել, իսկ այստեղ ամեն ինչ ընթանում է ծիսակարգով, որը պարտադրում է հարգել դիմացինի խոսքը: Այսինքն՝ կանոնադրության պես բան կա, որին հետևում ենք: Եվ, բացի այդ, թեման քննարկվում է շարունակաբար, չի քննարկվում ու փակվում, այլև փորձում ենք դա հանել դուրս օթյակից ու դարձնել հանրապետության քննարկման թեմա ընտրյալների, պատգամավորների ու կարևոր դեմքերի հետ», -ասաց Քրիստոֆ Աբբասը:

Հարցին, թե ո՞րն է մասոնական ծիսակարգերի, թեմայի, դեմքերի շուրջ գաղտնիության իմաստն ու խորհուրդը, Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մասոնական կազմակերպության ղեկավար, Մեծ վարպետ Քրիստոֆ Աբբասը պատասխանեց՝ ասելով, որ մասոնության գաղափարը հենց նման է ծիսակարգերին հետևելուն, քանի որ մասոնությունը նախ աշխատանք է ինքը քեզ վրա:

Ինչ վերաբերում է ծիսակարգերին, ապա դրանք ժառանգված են անցյալից ու փոխանցվում են՝ որպես մթնոլորտի առանձնահատկություն, սակայն ներկայում առաջվա գաղտնիություն չկա, որովհետև անգամ հատուկ հաղորդումներ են հեռարձակվում՝ նկարահանված օթյակների ներսից:

«Գաղտնի է միայն վերապրածը, այսինքն՝ մարդը, որը մտնում է մասոնական կազմակերպություն, ով հետևում է այդ ծիսակարգերին, դա իր վերապրածն է», -բացատրեց Մեծ վարպետը:

Նա տեղեկացրեց, որ Հայաստանում են երկու նպատակով բացվել է «Մեծ Արևելքի» մասոնական օթյակ և դա համընկել է Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին, ուստի իրենք ևս ցանկացել են այս օրերին լինել Ծիծեռնակաբերդում: «Ովքե՞ր են հայկական մասոնական օթյակի անդամները, ինչո՞վ են զբաղվելու». այս մասին հարցին ի պատասխան՝ Մեծ վարպետը նկատեց, որ մասոնության մեջ կա կանոն, ըստ որի՝ իրենց անդամներին ազատ են թողնում այդ մասին բարձրաձայնել, թե ոչ, բայց իրենք իրենց թույլ չեն տալիս: «Մենք ունենք ընկեր և եղբայր հայեր, դրա համար էլ ցանկացել ենք այստեղ ևս օթյակ բացել, որն այստեղ՝ Երևանում կաշխատի մեր՝ հավասարություն, եղբայրություն, ազատություն սկզբունքների հիման վրա, ոչ միայն Ֆրանսիայում», -ասաց Մեծ վարպետը:

## Մեկ տարում Երեւանում բնակարանները զգալիորեն էժանացել են

Ինչպես գիտեք, վերջին տարիներին բնակարանների շուկայական գները, դատելով պաշտոնական հրապարակումներից, աճել են: Կրիայի տեմպերով, բայց

աճել են: Հասկանալի է, որ այդ գործընթացը պետք է վկայեր գնորդների շրջանում պահանջարկի աշխուժացման մասին՝ բնակարանների լայն առաջարկի ֆոնին: Բայց նման ենթադրությունը այն ժամանակ հակասում էր մի շարք երևանյան ռիելթորների տեսակետին, որոնք վստահեցնում էին, որ անշարժ գույքի շուկայում ընդհանրապես ու բնակարանների շուկայում, մասնավորապես, լճացում է:

Եվ ահա, տարեսկզբից գների դինամիկայում կարծես բեկում է սկսվել: Օրինակ հունվար- մարտ ամիսներին Երեւանի վարչական շրջանների մեծ մասի բնակարանների 1 քառ մետրի շուկայական գները նվազել են: Գների աճ գրանցվել էր մայրաքաղաքի 11 թաղամասերից միայն երեքում: Ընդ որում դրանցից երկուսը՝ Կենտրոնն ու Արաբկիրը, ավանդաբար գների մակարդակով գտնվում են մեկ բեւեռում, իսկ երրորդը՝ Նուբարաշենը, հակառակ բեւեռում: Նկատենք, որ տարեկան կտրվածքով գների աճը (դրանց պաշտոնական վարկածով) այդքան էլ զգալի չէ՝ 250-400 դրամ Կենտրոն ու Արաբկիր թաղամասերի բնակարանների մեկ «քառակուսու» համար, ու մինչև 600 դրամ՝ Նուբարաշենում:

Ստացվում է, որ էժանացել են այն բնակարանները, որոնք գտնվում են գների միջին սեգմենտում՝ «քառակուսու» համար 1.2 հազար դրամից՝ Նոր Նորքում, մինչև 4.0 հազար դրամ՝ Էրեբունիում: Այստեղ պետք է նկատի ունենալ մեկ հանգամանք: Անշարժ գույքի պետական կադաստրը ֆիքսում է բնակարանների առքուվաճառքի ակտերի գները: Հետևաբար հայտարարագրված գներից իրական գների շեղումները բացառված չեն: Սակայն նման պրակտիկա վաղուց կա, ու դժվար թե մեկ տարում այդ տարբերությունը ավելանար:

Հնարավոր է նաև հետևյալ բացատրությունը՝ միջին սեգմենտում բնակարանների գնորդները սկսել են նախապատվություն տալ համեմատաբար ցածր գներով բնակարաններին: Իսկ ահա Կենտրոն ու Արաբկիր թաղամասերում հակառակ պատկերն էր՝ աճել է համեմատաբար թանկարժեք բնակարանների պահանջարկը:

Կա տեսակետ, որ մայրաքաղաքի էլիտար կենտրոնում բնակարաններ են գնում Ռուսաստանում բնակվող մեր ունեւոր հայրենակիցները: Վերջին տարիներին ռուսական ռուբլին դոլարի նկատմամբ նկատելիորեն թուլացել է, ու ապագայի որոշ կանխատեսումներ այդքան էլ հուսադրող չեն: Այնպես որ ռուբլով կապիտալներ ունեցողների համար հեռանկարները բավականին մշուշոտ են: Այդ պայմաններում անշարժ գույքի գնումը պատմական հայրենիքում որոշակի իմաստ ունի:

Բայց ապրիլին գների տարեկան նվազում է գրանցվել արդեն մայրաքաղաքի անխտիր բոլոր թաղամասերում : Յուրատեսակ ռեկորդ է սահմանվել Արաբկիր ու Դավիթբաշեն թաղամասերում, որտեղ բնակարանների մեկ քառակուսի մետրի միջին շուկայական գինը նվազել է 27.0 ու 26.5 հազար դրամով համապատասխանաբար: Ամենափոքր տեղաշարժը այդ նույն Կենտրոն էլիտար թաղամասում էր,

որտեղ մեկ «քառակուսին» էժանացել է ընդամենը 1.0 հազար դրամով

Մերաստ Գրիգորյան

## Միջազգային ճգնաժամային խումբ. Հայաստանն ու Ադրբեջանը մոտ են պատերազմին



Հայաստանն ու Ադրբեջանը Ղարաբաղում ավելի մոտ են պատերազմին, քան երբևէ վերջին 20 տարում` հրադադարի հաստատումից հետո: Այս մասին ասվում է Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցում:

Փորձագետների կարծիքով կողմերն ընդունում են այն վտանգը, որ նման էսկալացիայի դեպքում կներառվեն երկու հիմնական տարածաշրջանային տերությունները` Ռուսաստանն ու Թուրքիան, որոնք պայմանագրեր ունեն Հայաստանի ու Ադրբեջանի հետ համապատասխանաբար:

«Մինչ բռնության մակարդակը մնում է համեմատաբար ցածր, ցանկացած էսկալացիա կարող է արագ դուրս գալ հսկողությունից, ու ավելի մահաբեր մարտական գործողությունների վտանգը` ծայրահեղ կործանարար զենքի կիրառումով, իրական է: Ապագա էսկալացիան զսպելու անկարողությունը, հավանաբար կհանգեցնի ծանր զոհերի` օտարերկրյա ինտերվենցիայի հետ համադրությամբ: Տարածաշրջանային տերություններից ցանկացածի գործերի տեղակայումը խորը ազդեցություն կթողնի Հայաստանի ու Ադրբեջանի ու նրանք ինքնիշխանության վրա` մինչ երկու երկրներն էլ հենց նոր են նշել անկախության 25-րդ տարեդարձը», - ասվում է զեկույցում:

Վերլուծաբանները նշում են, որ Հայաստանը, որը մտահոգված է Լեռնային Ղարաբաղի անվտանգությամբ ու վրդովված Բաքվի համառությամբ, պնդում է, որ անվտանգության ռիսկերը նվազեցվեն մինչև առարկայական բանակցությունների սկիզբը: Միաժամանակ Ադրբեջանը հիասթափված է ստատուս – քվոյի բազմամյա պահպանումով ու մտահոգված է նրանով, որ անվտանգության լրացուցիչ միջոցառումները կարող են ավելի ամրապնդել այն:

Վերլուծաբանների կարծիքով, պատերազմի վերսկսումը թույլ չտալու լավագույն միջոցը Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի համակարգված գործողություններն են: «Նրանք նաև պետք է ճնշում գործադրեն Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդների վրա, որպեսզի մեղմեն թշնամական հռետորաբանությունը, մեղմեն իրենց բանակցային դիրքորոշումները ու ընդունեն, մասնավոր կարգով, այլ ոչ թե հրապարակվ, որ այդ հակամարտությունը

ի վերջո կկարգավորվի միայն բանակցային ուղով, այլ ոչ թե ուժով», - ամփոփում են հեղինակները:

## Իրանական ընկերության հետ քննարկվել է Հայաստանում տոհմային ճտերի արտադրության կազմակերպման հարցը



«Հ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանն այսօր ընդունել է իրանական թռչնաբուծական «Մորփիարվար» ընկերության հիմնադիր տնօրեն Հոսեյնդոլի Լոթֆիին:

Գյուղնախարարությունից հայտնում են, որ Հոսեյնդոլի Լոթֆին տեղեկացրել է, որ ընկերությունը հետաքրքրված է Հայաստանում իրականացնել երկարաժամկետ գործունեություն տոհմային ճտերի արտադրության կազմակերպման ուղղությամբ:

«ՀՀ կառավարությունը խնդիր է դրել փոխարինել ներմուծումը տեղական արտադրանքով, ուստի մենք ողջունում ենք Ձեր նախաձեռնությունը եւ հայտնում մեր պատրաստակամությունը հնարավորինս աջակցել Ձեզ Հայաստանում արտադրության կազմակերպման ուղղությամբ», - նշել է փոխնախարարը: Այնուհետև Աշոտ Հարությունյանը Հոսեյնդոլի Լոթֆիի խնդրանքով համառոտ ներկայացրել է Հայաստանում թռչնաբուծության ոլորտի ներկա վիճակը, առաջնային հարցերը, ինչպես նաև այս ոլորտում գործող օրենսդրական դաշտը:

Հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հանգամանքը` նախարարի տեղակալը հնարավոր է համարել նաև հետագայում պատրաստի արտադրանքը արտահանել դեպի ԵՏՄ շուկա: Միաժամանակ փոխնախարարն ընդգծել է բարձրորակ արտադրանքի ապահովման կարևորությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են արտադրության կազմակերպման առնչվող մի շարք այլ հարցեր եւս:

## Շառլ Ազնավուրը կլինի իր տուն-թանգարանի գլխը

Երևանում, այսօր` հունիսի 1-ին, Շառլ Ազնավուրին պաշտոնապես հանձնվեց նրա կեցավայրի բանալին, որը հետայսու պատկանելու է «Ազնավուր» հիմնադրամին եւ դառնալու է մատերոյի տուն-թանգարանը:

Արարողությունից առաջ լրագրողների հետ զրույցում «Ազնավուր» հիմնադրամի տնօրեն Զրիստինա Մարկիսյանը

նշեց, որ շանտայնի տուն-թանգարանը տարբերվելու է իր տեսակով. «Այն չի լինելու դասական թանգարան, ինչպես պատկերացնում են շատերը: Այն դառնալու է աշխարհում առաջին թանգարանը, որտեղ հերոսը թանգարանի այցելուներին իր կյանքի պատմությունն անձամբ է պատմում. տեքստերն ու աուդիո ձայնագրությունները հենց Շառլ Ազնավուրին են», - նշեց՝ հավելելով, որ թանգարանում պահվելու են նաև Ազնավուրի սիրելի իրերը՝ օրինակ, դաշնամուրը: Բացի այդ, թանգարանի այցելուները կկարողանան ունկնդրել շանտայնի համերգը՝ 3D ձևաչափով:

Քրիստինա Սարկիսյանը հավելեց, որ տուն-թանգարանի ներսում նաև ձայնագրման ստուդիա է լինելու, որտեղ այցելուները կարող են կատարել Շառլ Ազնավուրի երգերը, տեսնել, թե ինչպես է այդ գործընթացն իրականանում:

Շառլ Ազնավուրի տուն-թանգարանի բացումը նախատեսվում է 2018 թվականին: Բայց հստակ ժամկետներ չկան, քանի որ, ինչպես նշեց Քրիստինա Սարկիսյանը, համապատասխան տեխնիկան բերվելու է Ճապոնիայից եւ Գերմանիայից:

Շառլ Ազնավուրը Հայաստանում իր բարեգործական գործունեությունը սկսել է 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից հետո: Դրան հաջորդող 30 տարիների ընթացքում նրա կողմից ներդրված ջանքերն ուղղվել են երկրում իրականացվող բազմաթիվ բարեգործական ծրագրերին: 2016 թ. Շառլ Ազնավուրն ու նրա որդին՝ Նիկոլա Ազնավուրը, որոշեցին նոր լիցք տալ մատչելի բարեգործական գործունեությանը: Արդյունքում ստեղծվեց «Ազնավուր» հիմնադրամը:

Նշենք, որ Երեւանում Շառլ Ազնավուրի կեցավայրի բացումը տեղի էր ունեցել 2011 թ. հոկտեմբերի 7-ին՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի ու աշխարհահռչակ շանտայն Շառլ Ազնավուրի ներկայությամբ:

Հինգհարկանի շենքը գտնվում է Երեւանում՝ Կասկադի հարեւանությամբ: Այն ներառում է թանգարան, բացօթյա համերգատար՝ նախատեսված 120-150 հանդիսատեսի համար, ինչպես նաև Շառլ Ազնավուրի կեցավայրը: Ծննդի շինարարությունը մեկնարկել էր 2007 թվականին ու ավարտվել 2009-ին: 2017 թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել շենքը նվիրաբերել «Ազնավուր» հիմնադրամին՝ որպես պայման նշելով, որ այն ծառայելու է բացառապես Շառլ Ազնավուրի տուն-թանգարան լինելու գործին:

## Հին Երեւանում նորից շինարարական աշխատանքներ կսկսվեն

Երեւանի փոքր կենտրոնում գտնվող տարածքը կտրվի էլիտար թաղամաս կառուցելու համար: Այս մասին որոշումն ընդունվել է հունիսի 1-ին, Հայաստանի կառավարության նիստում:

Տարածքը կտրվի «Ի Էմ Սի» ընկերությանը՝ Հին Երեւան թաղամասում տներ կառուցելու նպատակով: Իշխանությունների կարծիքով, նոր թաղամասում կտիրի հին մայրաքաղաքի մթնոլորտը:



Շինարարական աշխատանքները կսկսվեն Արուսյան, Բյուզանդ, Կողբացի եւ Արամի փողոցների միջև գտնվող հատվածում: Այնտեղ նախատեսվում է «վերակառուցել» հին շինությունները (XIX –XX դարեր), որոնք նախկինում ապամոնտաժվել են, իսկ փոխարենը բազմահարկ էլիտար շենքեր են կառուցել: Սակայն հին շինությունների քարերը համարակալվել եւ պահվել են: 120-130 մյն դոլար գնահատվող նախագիծը հաստատվել է 2014 թվականին նոյեմբերին:

## Այս նախաձեռնությունը Հայաստանի ապագայի հանդեպ իմ նվիրվածության վկայությունն է. Շառլ Ազնավուր

«Ազնավուր» հիմնադրամի ստեղծման որոշումը կայացրել եմ մեծագույն վստահությամբ՝ տեսնելով վերջին տարիներին Հայաստանում իրականացված հրաշալի կրթական ծրագրերը, պատմական հուշարձանների վերականգնումն ու նոր ենթակառուցվածքների ստեղծումը: Այս մասին, այսօր՝ հունիսի 1-ին, Երեւանում «Ազնավուր» հիմնադրամի ստեղծման մասին ազդարարելով, ասաց աշխարհահռչակ շանտայն Շառլ Ազնավուրը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն անձամբ մատչելի է հանձնեց նրա կեցավայրի բանալին, որը հետայսու լինելու է Ազնավուրի տուն-թանգարանը: Ծանոնյեն իր խոսքում նշեց, որ հիմնադրամը ստեղծել է որդու՝ Նիկոլա Ազնավուրի հետ համատեղ:

«Հիմնադրամը կշարունակի 1988-ի ավերիչ երկրաշարժից ի վեր իմ կողմից իրականացվող բարեգործական գործունեությունը: Հիմնադրամի նպատակն է լինելու աջակցել Հայաստանի բնակչության առավել խոցելի խավերին, ինչպես նաև Շառլ Ազնավուրի երեւանյան կեցավայրում թանգարան ստեղծել: Այս թանգարանը կիյուրընկալի մշակութային ու կրթական միջոցառումներ եւ կդառնա Երեւանի կարեւորագույն տեսարժան վայրերից մեկը: Այս նախաձեռնությունը Հայաստանի ապագայի հանդեպ իմ նվիրվածության վկայությունն է, որը, հուսով եմ, կխրախուսի սփյուռքի ներգրավվածությունը եւ կհետաքրքրի այցելուների աշխարհի բոլոր կողմերից:

Այս որոշումը կայացրել են մեծագույն վստահությամբ՝ տեսնելով վերջին տարիներին Հայաստանում իրականացված հրաշալի կրթական ծրագրերը, պատմական հուշարձանների վերականգնումն ու նոր ենթակառուցվածքների ստեղծումը: Բոլորս մեր համատեղ ջանքերը պետք է ուղղենք հայրենիքի զարգացմանը, որպեսզի հայ երիտասարդներին հնարավորություն ընձեռենք իրենց երազանքները կյանքի կոչելու հայրենի երկրում՝ հարազատ մարդկանցով շրջապատված: Ուզում են շնորհակալություն հայտնել այս նախագծի բոլոր աջակիցներին՝ նախագահ Սերժ Սարգսյանին եւ իր աշխատակազմին, մշակույթի եւ արտաքին գործերի նախարարություններին: Այս նախագիծը իրականություն չէր դառնա առանց մեր գործընկերների, այդ թվում՝ մեր ռազմավարական գործընկեր IDeA հիմնադրամի համահիմնադիրներ, մեր բարեկամներ Ռուբեն Վարդանյանի, Վերոնիկա Չոնաբենդի եւ Նուբար Աֆեյանի, ովքեր սատարում են մեր ամեն քայլին այս ճանապարհին»,- ասել է Շառլ Ազնավուրը:



«Ազնավուր» հիմնադրամի առաջին նախագիծը Երեւանում Շառլ Ազնավուրի թանգարանի ստեղծումն է: Շառլ Ազնավուրն ու նրա ընտանիքը որոշել են երեւանյան թանգարանին նվիրաբերել երգչի բոլոր պարգեւները, անձնական իրերը եւ այն ամենը, ինչ կազմում է մասետրոյի ժառանգությունը: Հիմնադրամի ծրագրերի մշակումը եւ իրագործումը կղեկավարի անձամբ Նիկոլա Ազնավուրը: Հիմնադրամի գլխավոր տնօրենն է Զրիստինա Սարկիսյանը: Նշենք, որ Երեւանում Շառլ Ազնավուրի կեցավայրի բացումը տեղի էր ունեցել 2011 թ. հոկտեմբերի 7-ին՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի ու աշխարհահռչակ շանտոնյե Շառլ Ազնավուրի ներկայությամբ: Հինգհարկանի շենքը գտնվում է Երեւանի Կասկադի հարեւանությամբ: Այն ներառում է թանգարան, բացօթյա համերգարան՝ նախատեսված 120-150 հանդիսատեսի համար, ինչպես նաեւ Շառլ Ազնավուրի կեցավայրը: Ծենքի շինարարությունը մեկնարկել էր 2007 թվականին ու ավարտվել 2009-ին: 2017 թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել շենքը նվիրաբերել «Ազնավուր» հիմնադրամին՝ որպես պայման նշելով, որ այն

ծառայելու է բացառապես Շառլ Ազնավուրի տուն-թանգարան լինելու գործին:

## Մայիսի 29-ին Երեւանում ծնվել է 45 երեխա



Մայիսի 29-ին Երեւանում ծնվել է 45 երեխա՝ 24 տղա եւ 21 աղջիկ:

## Արեւմտյան Հայաստան

### Թուրքիայում 12-րդ դարի եկեղեցուց գողացել են մարմարե խաչը



Թուրքիայի Անթալիա նահանգի տարածքում հայտնաբերված 12-րդ դարի եկեղեցում գտնվող մարմարե խաչը գողացել են:

Թուրքական Evrensel-ի փոխանցմամբ բյուզանդական ժամանակաշրջանի Միռա պատմական քաղաքում 2010 թվականին թուրք հնագետները 12-րդ դարի եկեղեցի են հայտնաբերել, որի պատի մեջ մարմարե խաչ է տեղադրված եղել:

Անթալիայի ոստիկանությունը հնագետներից հաղորդագրություն է ստացել, որ անհայտ անձը կամ անձիք պատը փորելու միջոցով գողացել են մարմարե խաչը:

### Կարսը հայկական քաղաք լինելու համա՛ր են իշխանությունները պատժում կարսեցիներին. թուրք լրագրող

Թուրքական OdaTV կայքի լրագրող Մահմուդ Ալլնաքն իր հեղթական հրապարակման մեջ անդրադարձել է Կարսի

նկատմամբ թուրքական իշխանությունների անտարբերությանը:



Թուրք լրագրողը շեշտել է, թե Կարսում գործադրվությունը ահռելի բարձր տոկոս է կազմում, իսկ ուլքեր աշխատանքի համար պանդխտության են մեկնում, փորձում են այլևս չվերադառնալ Կարս:

Մահմուդ Ալընաքը նշել է, թե Կարսը հարակից գյուղերին կապող բազմաթիվ ճանապարհներ հայերի ժամանակներից կառուցված հողային ճանապարհներն են:

«Կարսը հայկական քաղաք լինելու համար են իշխանությունները պատժո՞ւմ Կարսի բնակիչներին: Կարսը վճարում է հարկեր, մասնակցում է ընտրությունների, սակայն երբ գալիս է Կարսին ծառայություն մատուցելու ժամանակը, Կարսի առաջ փակ են իշխանության դռները», - գրել է OdaTV-ի լրագրողը:

## Միյունք

### Հունահայ համայնքն կարեւոր ներդրում ունի Հունաստանի զարգացման գործում. Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտ



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն այսօր՝ մայիսի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց «Ավորթա» մրցանակարաշխության առիթով Հայաստան ժամանած Հունաստանի Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտ Անթիմոս Կուկուրիդեան և առաջնորդարանի ղեկավարապետ Իրենեոս վարդապետ Լավցիսին՝ ուղեկցությամբ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Առաքելյանի:

Մայր աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ Նորին Սրբությունը, ուրախություն հայտնելով Հույն

Ուղղափառ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների այցի առիթով, կարեւորեց դարերի ընթացքում հայ եւ հույն ժողովուրդների, ինչպես նաեւ երկու Եկեղեցիների միջեւ ձեւավորված ջերմ փոխհարաբերություններն ու սերտ գործակցությունը: Իր հերթին Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտը Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Հունաստանի Հերոնիմոս Բ Արքեպիսկոպոսի ջերմ ողջույնները: Անթիմոս միտրոպոլիտն իր խոսքում ուրախությամբ ընդգծեց, որ հունահայ համայնքն իր ակտիվ գործունեությամբ կարեւոր ներդրում ունի Հունաստանի զարգացման ու բարգավաճման գործում: Վերջինս նաեւ խոսեց հայ եւ հույն ժողովուրդների պատմության ծանր ժամանակաշրջանների մասին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ, հակառակ բոլոր փորձությունների, այսօր երկու ժողովուրդները շարունակում են կերտել իրենց խաղաղ ու բարօր կյանքը:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրնությունն ու բարեմաղթանքները բերելով հոգեւոր այրերին, նաեւ եղբայրական ողջույններ փոխանցեց Հունաստանի Արքեպիսկոպոսին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Հոգեշնորհ Տ. Շահե ծայրագույն վարդապետ Ամանյանը եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Բասիակ վարդապետ Պողոսյանը:

### Պոլստ հայոց պատրիարքի տեղապահ, արք. Բեքյանը հանդիպել է հայ համայնքի ներկայացուցիչների հետ



Գերմանիայից Ստամբուլ մեկնած Պոլստ հայոց պատրիարքի տեղապահ արք. Գարեգին Բեքյանը Ստամբուլում հանդիպել է հայկական հիմնադրամների նախագահների ու որոշ հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արք. Բեքյանի եւ ստամբուլահայ համայնքի ներկայացուցիչների հանդիպումը տեղի է ունեցել Պոլստ հայոց պատրիարքարանում:

Հանդիպման ժամանակ քննարկվել է առաջիկայում Պոլստ հայոց պատրիարքարանում իրականացվելիք քայլերը: Որոշում է կայացվել հունիսի 3-րդ շաբաթվա ընթացքում հայ համայնքի անդամների հետ ավելի լայնածավալ հանդիպում կազմակերպել:

Նշվել է, որ արք. Բեքյանը հունիսի 4-ին մեկնելու է Երեւան, որից հետո Գերմանիա, որտեղ կհանձնի իր պարտականությունները եւ Ստամբուլում կիրականցնի իր պարտականությունները:

# Միջազգային

## Թուրք բարձրաստիճան գինվորականներին տեղափոխող ուղղաթիռը մենք են խփել. PKK



Թուրքիայի Շրնաք նահանգում բարձրաստիճան գինվորականներ տեղափոխող ռազմական ուղղաթիռը կործանելու պատասխանատվությունն ստանձնել է PKK (Քուրդիստանի բանվորական կուսակցություն):

Քրդական ANF—ի փոխանցմամբ՝ PKK-ի տարածած հայտարարության մեջ նշվել է, թե քուրդ գինյալների դեմ Քաթո լեռան վրա հարձակումները համակարգող թուրք գինվորականներին տեղափոխող ուղղաթիռը խփվել է քուրդ գինյալների կողմից:

«Ուղղաթիռում գտնվում էին քուրդ գինյալների դեմ Քաթո լեռան վրա ռազմական գործողությունները համակարգող բարձրաստիճան թուրք գինվորականներ՝ գեներալ Այդողան Այդընը, գնդապետ Օղուզհան Քյուչուքդեմիրը եւ այլք», - նշվել է PKK-ի տարածած հաղորդագրության մեջ:

Նշենք, որ թուրքական պաշտոնական հաղորդագրությամբ 13 բարձրաստիճան գինվորականներին տեղափոխող ուղղաթիռը բախվել է բարձրավոյտ հաղորդալարերի ու ընկել, որի հետեւանքով ուղղաթիռում գտնվող բոլոր գինվորականները մահացել են:

## Փոխնախարար. ԵՏՄ-ն մտադիր է Իրանի հետ ազատ առևտրի անցնել 2018-ից



ԵՏՄ երկրների աշխատախումբը հոկտեմբերին հույս ունի ներկայացնել Իրանի հետ բանակցությունների արդյունքներով փաստաթուղթը: Այս մասին ասել է Հայաստանի տնտեսական զարգացման ու ներդրումների փոխնախարար Հովհաննես Ազիզյանը:

ԵՏՄ-ի բանակցողները հույս ունեն փաստաթուղթը ներկայացնել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդում, որը պետք է հոկտեմբերին անցնի:

Հաջող աշխատանքի դեպքում 2018-ի հունվարի 1-ից ուժի մեջ կմտնի ազատ առևտրի մասին ժամանակավոր

պայմանագիրը՝ 3 տարի ժամկետով: Այն ժամանակավոր է լինելու, քանի որ սպորանքների անվանացանկը սահմանափակ է, պարզաբանեց Ազիզյանը: «Հետագայում մենք կփորձենք պատրաստել մեկ այլ փաստաթուղթ, որտեղ ազատ ռեժիմը կտարածենք սպորանքների ավելի մեծ քանակի վրա», - ամփոփեց փոխնախարարը:

## Հակահայկական հողվածներով հայտնի թուրքական թերթի խմբագրին սպանել է փեսան



Հայերի ու քրդերի հանդեպ քին ու ատելություն սերմանող թուրքական իշխանամետ Yeni Akit պարբերականի գլխավոր խմբագիր Քադիր Դեմիրելին սպանվել է փեսայի կողմից:

Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ մայիսի 29-ի երեկոյան աշխատանքի վայրում գտնվող Քադիր Դեմիրելին հեռախոսով հայտնել են, որ աղջիկն ու փեսան վիճում են, ինչից հետո նա շտապ դուրս է եկել խմբագրությունից, եւ ուղեւորվել աղջկա տուն:

Քադիր Դեմիրելը տանը սկսել է վիճել փեսայի՝ Ջեմիլ Յավուզ Քարանֆիլի հետ: Վեճը թեժացել է, որի ընթացքում փեսան դանակահարել է Քադիր Դեմիրելին, այնուհետ կնոջը՝ Էսմա Քարանֆիլին:

Հիվանդանոց տեղափոխված հոր ու աղջկան վիրահատության են ենթարկել, սակայն Քադիր Դեմիրելի կյանքը չի հաջողվել փրկել:

Նշվում է, որ փեսան դեպքից հետո ներկայացել է ուստիկանություն:

## Հասարակական

### Չավեն Հարությունյան. 1965 թ. ապրիլ 24-ի ցույցի ժամանակ փողոց ելած բազմության առաջին շարքերում

Ծանոթ. – 2016 թվականը, կարելի է համարել Հայաստանում այլախոհության հաստատման 50-ամյակը: 1966 թ ապրիլի 24-ին հիմնադրվեց Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ): ԱՄԿ-ի երեք հիմնադիրներն էին **Հայկազ Խաչատրյանը** (մահացել է 1989-ին), **Ստեփան Չառիկյանը** (գնդակահարվել է Մոսկվայում 1979-ին) եւ **Ծահեն Հարությունյանը** (քաղբանտարկյալ Ծանթ Հարությունյանի հայրը): ԽՍՀՄ տարածքում Հայաստանը դարձավ միակ հանրապետությունը, որտեղ գործում էր կազմակերպված ընդդիմադիր կուսակցություն: Այս տարվա ընթացքում ԱՆԻ կենտրոնը կփորձի, իր հնարավորությունների չափով, օրակարգում պահել Խորհրդային Հայաստանի այլախոհության պատմությունը՝ դա համարելով հայագիտության քիչ ուսումնասիրված

թեմա: Այսօր ներկայացնում ենք ևս մի հատված խորհրդահայ այլախոհ, 8 տարի անազատություն կրած Վարդան Հարությունյանի ԱՅԼԱԽՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՂՈՂՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ արժեքավոր հատորից:



1964 թվականի օգոստոսից մինչև 1967-ի մայիսը Հայաստանում քաղաքական դատավարություններ գրեթե չեն ընթացել: Պատճառը, թերեւս, այն էր, որ ընդհատակյա և կիսարևոտակայա զարգացումները տեղավորվում էին իշխանությունների նախանշած թույլատրելիության սահմաններում: Դրանք, որպես կանոն, կրում էին ընդգծված հայրենասիրական բնույթ եւ չէին հակադրվում խորհրդային իշխանություններին: Սակայն 1965 թ. ապրիլ 24-ին կայացած ցույցը գլխավայր շրջեց ամեն ինչ, ջարդեց բազմաթիվ տարուներ: Այդ ցույցից հետո հանրությունը, հատկապես քաղաքական այլախոհական պայքարի մեջ ընդգրկված մարդիկ սկսում են գիտակցել, որ կարելի է եւ կարող են հակադրվել գործող կարգերին, որ հազարավոր մարդիկ պատրաստ են դուրս գալ փողոց եւ իշխանություններին ստիպել նահանջել:

Այլախոհների շրջանում սկսում է ձեւավորվել այն համոզմունքը, որ հայ ժողովրդի կորուստների համար մեղավոր է նաեւ Խորհրդային Միությունը: 1967 թ. մայիս 10-ին տեղի է ունենում Ֆրունզիկ Աբրահամի Մկրտչյանի եւ Մերգեյ Անդրանիկի Մելքոնյանի դատավարությունը: Յուրաքանչյուրը 10 ամիս ազատազրկման է դատապարտվում: Պատիժը մեղմ էր, որովհետեւ նրանց դեռ չէր հաջողվել շատ բան անել: Մկրտչյանը եւ Մելքոնյանը մեղադրվում են երիտասարդներից բաղկացած ազգայնական-հայրենասիրական խումբ ստեղծելու, ԽՍՀՄ-ում տարվող ազգային քաղաքականությունը քննադատելու, ինքնուրույն Հայաստան ունենալու ծրագիր մշակելու համար:

Այս գործով կայացված դատավճիռը Ազգային անվտանգության ծառայության արխիվից մեզ ստանալ չհաջողվեց: ԱՄԾ-ն մերժեց նրանց դատավճիռը մեզ տրամադրելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ չունենք դատապարտվածների կամ նրանց ժառանգների համաձայնությունը: Ցավոք, Մկրտչյանին, Մելքոնյանին կամ նրանց ժառանգներին գտնելու մեր փորձերն արդյունք չստեղծեցին:

### Չավեն Հարությունյան

Ֆրունզիկ Մկրտչյանի եւ Մերգեյ Մելքոնյանի դատավարությունից չորս ամիս անց՝ 1967-ի սեպտեմբերի 4-15-ը տեղի է ունենում Չավեն Հարությունյանի դատավարությունը: 1965 թ. ապրիլ 24-ի ցույցի ժամանակ Չավեն Հարությունյանը փողոց ելած բազմության առաջին շարքերում էր: Նաեւ այդ երթն է ելակետ դարձել, որ

Մատենադարանի գիտաշխատող Հարությունյանը սկսի զբաղվել ազգային-հայրենասիրական բնույթի գրականության պատրաստմամբ, հայթայթմամբ ու տարածմամբ: 1966-ի սկզբներին՝ արդեն պաշտոնապես նա հրավիրվում է Պետանվտանգության կոմիտե նախագրուշացվում իր հակաօրինական գործողության համար: ՊԱԿ-ին հաջողվել էր տեղեկություններ հայթայթել այն մասին, որ նա զբաղվում է «քաղաքականապես վտանգավոր բովանդակությամբ» գրականության տարածմամբ: Սակայն, հենց նույն թվականի մարտ ամսին, այսինքն՝ ՊԱԿ-ի նախագրուշացումից կարճ ժամանակ անց, նա ստեղծում է բարձր դասարանի դպրոցականներից կազմված պատանեկան հայրենասիրական խմբակ՝ «Հայոց պատանիների միություն» անվամբ, իր ծրագրով ու կանոնադրությամբ: Խմբակի ծրագրային դրույթները չէին հակադրվում կոմունիստական գաղափարախոսությանն ու սոցիալիզմի դրույթներին: Գլխավոր խնդիրներն էին՝ Դարաբաղի ու Նախիջեւանի վերամիավորումը Սովետական Հայաստանին եւ հայոց լեզվի անաղարտության պահպանումը:

Կազմակերպությունը հիմնականում զբաղվում էր հայրենասիրական բովանդակությամբ թռուցիկների տարածմամբ: Նույնիսկ Չավեն Հարությունյանի նկատմամբ կայացված դատավճիռն է արձանագրում, որ «նշված թռուցիկներն իրենց բովանդակությամբ բացահայտ հակասովետական բնույթ չեն կրում, բայց այդ թռուցիկները կազմելու եւ տարածման անթույլատրելի երեւույթը ըստ էության հակապետական են, խորթ եւ անընդունելի մեր հասարակության համար»: Ինքը՝ Հարությունյանը, դատարանի դահլիճում հայտարարում է, որ իրեն հակասովետական ագիտացիայի եւ պրոպագանդայի համար դատապարտելը սխալ է, որովհետեւ ինքը չի հակադրվել ու չի հակադրվում սովետական իշխանությանը եւ կարգերին: Միայն մեկ անգամ է Չավեն Հարությունյանը հստակ հակադրվում ԽՍՀՄ-ի հայտարարած քաղաքական կուրսին՝ երբ 1966 թ. դեկտեմբերի 22-ին «Սովետական Հայաստան» թերթում հրապարակվում է ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի նախագահի հայտարարությունը՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին: Դրան ի պատասխան՝ Չավեն Հարությունյանը կազմում է նոր թռուցիկ՝ «Ամանորյա կոչ հայ ժողովրդին», որտեղ կոչ է արվում հայ ժողովրդին՝ պայքարի դուրս գալ իր ոտնահարված իրավունքների վերականգման համար: Այդ թռուցիկներից ավելի քան 1000 օրինակ՝ իր ստեղծած պատանեկան խմբակի տղաների միջոցով, նա հաջողում է դեկտեմբերի 31-ի գիշերը տարածել Երեւան ու Վանաձոր քաղաքներում:

Բացի «Հայոց պատանիների միություն» կազմակերպության անունից հրապարակված եւ «ՀՊՄ» ստորագրված թռուցիկներից, Չավեն Հարությունյանի առաջարկով պատանիների միության անդամները տարածել են նաեւ «Բոլոր հայերին» վերնագրով թռուցիկ՝ «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդ» ստորագրությամբ:

2. Հարությունյանը, դատելով դատավճիռից եւ ի մի բերելով նրա ծանոթների եւ այդ շրջանում նրան առնչվող մարդկանց հուշերը, բացի «Հայոց պատանիների միության» անդամներից, կապ է ունեցել նաեւ այլ մարդկանց ու խմբակների հետ, բայց նրանց ով լինելը քննությունը պարզել չի կարողացել՝ նախաքննության ընթացքում

Հարությունյանի դրսևորած ճիշտ կեցվածքի շնորհիվ: Այսպես, իր թռուցիկներից մեկը, որը տվել էր բազմացման ու տարածման նպատակով, ստորագրված էր «Հայաստանի վերամիավորման շարժումը», որի գործունեությանը մասնակցելու համար մեղադրվել են ավելի ուշ դատապարտված Մարտին Նալբանդյանը եւ նրա համախոհները:


Այս կազմակերպության հետ առնչություններ է ունեցել նաև «Հանուն Հայրենիքի» ամսագրի գործով 1969 թ. դատապարտված Գեուրգ Հեքիմյանը: Քննության սկզբում Հարությունյանը հրաժարվել է նաև «Հայոց պատանիների միության» հետ իր առնչությունից՝ հուսալով, որ Պետանվտանգության կոմիտե տարված պատանիները կասեն, որ ոչնչից տեղյակ չեն: Սակայն, չեկիստների եւ ծնողների ճնշման տակ նրանք տալիս են Չավեն Հարությունյանի դեմ պահանջվող ցուցմունքներ, եւ վերջինս ստիպված է լինում ընդունել, որ կապ է ունեցել այդ պատանեկան կազմակերպության հետ: Եվ նախաքննության, եւ դատաքննության ընթացքում Հարությունյանն իրեն մեղավոր չի ճանաչում եւ հայտարարում է, որ հակօրինական ոչ մի քայլ չի արել:

Չավեն Եղիշի Հարությունյանը ծնվել է 1936 թ. Երեւան քաղաքում: Կրթությունը՝ բարձրագույն: Մասնագիտությամբ՝ պատմաբան: Մինչեւ կալանավորվելն աշխատել է Մատենադարանում: Գրել է ազգային-հայրենասիրական բովանդակությամբ թռուցիկներ, կազմակերպել է դրանց տպագրման, բազմացման ու տարածման աշխատանքները: Բազմացրել ու տարածել է արգելված գրականություն: Կալանավորվել է 1967-ի հունվարի 8-ին: Մեղադրվել է Խորհրդային Հայաստանի քր. օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Դատապարտվել է ազատազրկման երեք տարի ժամկետով: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան, եղել է ոստիկանական հսկողության տակ: Արգելել են աշխատել Մատենադարանում: Աշխատանքի է տեղավորվել Հանրագիտարանի խմբագրությունում: 1984 թ. մեկնել է ԱՄՆ՝ մշտական բնակության: Այնտեղ էլ հիվանդացել է քաղցկեղով: 1986-ին՝ արդեն քայքայված առողջությամբ այցելում է Հայաստան ու վախճանվում Երեւանում:

## Մադրիդյան սկզբունքներ ամբողջական տեքստ

ԹԱԹՈՒԼ ՀԱՎՈՐՅԱԼՍ

*Առաջին անգամ ամբողջովին հրատարակվում են Մադրիդյան սկզբունքները, որոնք, տարբեր ձևափոխումներով, բանակցությունների սեղանին են եղել սկսած 2007 թվականից, երբ այն Մադրիդի ԵԱՀԿ Նախարարական հսկողության ընթացքում հանձնվեց հակամարտության կողմերին: Փաստաթղթի այս տարբերակը, պայմանականորեն, անվանվում է Մայր Մադրիդյան, որը մերժել է Ադրբեջանը: Փաստաթղթի նորագված տարբերակում կամ տարբերակներում, հանրաքվեի կամ պրեքսիդի մասին կետը առաջինից տարվել է հետ, կատարվել են որոշ այլ փոփոխություններ, որոնք արդեն անընդունելի են եղել հայկական կողմի համար:*



**Մադրիդյան սկզբունքներ** (անգլ.՝ Madrid proposals), 2007 թվականին նոյեմբերին Մադրիդում ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից Արցախյան հակամարտության հետ կապված բանակցությունները վարող Հայաստանին և Ադրբեջանին խնդրի կարգավորման առաջարկած հիմնական սկզբունքների պայմանական անվանումը: Մադրիդյան սկզբունքների թարմացված տարբերակի մի մասը հրատարակվել է 2009 թվականի հուլիսի 10-ին Իտալիայի Աքվիլա քաղաքում<sup>[1]</sup>:

Հուլիսի 10-ին Աքվիլայում (Իտալիա) կայացած Մեծ ութնյակի զագաթնաժողովի ժամանակ արված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ-երկրների համատեղ հայտարարության հիման վրա Ադրբեջանին և Հայաստանին ներկայացվել էր 2007 թ.-ի նոյեմբերի 29-ի Մադրիդյան փաստաթղթի թարմացված տարբերակը, որը պարունակում է համանախագահների վերջին առաջարկությունները դարաբաղյան հակամարտության հիմնական սկզբունքների ձևակերպման վերաբերյալ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները, որոնք, որպես պաշտոնական առաջարկ, ԵԱՀԿ Նախարարների խորհրդում ներկայացվել են Հայաստանի և Ադրբեջանի նախագահների քննարկմանը Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և Միացյալ Նահանգների կողմից՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ (նոյեմբերի 29, 2007թ., Մադրիդ)

Մենք՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներս, համաձայնության ենք եկել, որ տարածաշրջանի կայունությունը, անվտանգությունն ու բարգավաճումը պահանջում է ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորում: Հղում կատարելով Հեկինկյան Եզրափակիչ Ակտի (1975թ.) ԵԱՀԿ/ԵԱԽՀ Մասնակից պետությունների միջև հարաբերությունները ուղղորդող սկզբունքների Հռչակագրին և մասնավորապես, 2-րդ հոդվածին՝ ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքից խուսափելու, 4-րդ հոդվածին՝ պետությունների տարածքային ամբողջականության, և 8-րդ հոդվածին՝ իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ:

Համաձայն այդ դրույթների, սույնով մենք կարգադրում ենք մեր արտգործնախարարներին՝ համագործակցելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, մշակել հակամարտության խաղաղ կարգավորման համապարփակ համաձայնագիր (հետայսու՝ Խաղաղության

Համաձայնագիր), հիմնվելով ներքոշարադրյալ սկզբունքների վրա.

1) ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ և իրական արտահայտում<sup>2</sup>: Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում, ինչպես նկարագրված է 9-րդ կետում: ԼՂ բնակչությունը ասելով հասկացվում են 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը:<sup>3</sup> Պլեբիսցիտի ընթացքում հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն:

2) Միջանկյալ ժամկետի ընթացքում, մինչև ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի որոշումը, վերջինիս բնակիչները կունենան որոշակի իրավունքներ և արտոնություններ,<sup>4</sup> որոնք պետք է շարադրվեն Խաղաղության Համաձայնագրում՝ համաձայն ներքոշարադրյալ սկզբունքների.

– ԼՂ բնակչությունը/բնակիչները ունենալու են ժողովրդավարական հասարակության մեջ սոցիալական ու տնտեսական կենսագործունեությունն ու անվտանգությունը պաշտպանելու և վերահսկելու իրավունք, որը հետևում է օրենքի նորմերին: Նրանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգվելու են:

– ԼՂ բնակչությունը իրավունք է ունենալու ընտրելու իշխանության մարմիններ՝ միջանկյալ շրջանում ԼՂ-ն կառավարելու համար: Իշխանության այդ մարմինները կիրականացնեն օրենսդիր և գործադիր իշխանություն ԼՂ-ի ներքին հարցերում, ինչպես նաև կհիմնեն դատարաններ՝ արդարադատություն իրականացնելու նպատակով: Պաշտոնյաները նաև լիազորություններ կունենան արտաքին շփումներ ունենալ այն ոլորտներում, որոնք սահմանվելու են Խաղաղության Համաձայնագրով:

– ԼՂ միջանկյալ իշխանությունները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկվում են անմիջականորեն ԼՂ-ին վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպություններին, որոնցում միջազգայնորեն ճանաչված լինելու կարգավիճակը նախապայման չէ:

– ԼՂ-ն իրավունք է ունենալու ստանալ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն՝ պայմանով, որ այդ օժանդակությունը նախատեսված լինի մարդու իրավունքների, խաղաղ տնտեսական և ժողովրդավարական զարգացման, մշակութային և առևտրային կապերի համար կամ հիմնական մարդասիրական պահանջների բավարարմանը:

3) ԼՂ-ին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվելու են ադրբեջանական վերահսկողության տակ ներքոշարադրյալ կարգով, որոնց մանրամասները կողմերը համաձայնեցնելու են Խաղաղության Համաձայնագրով:

– Հայկական ուժերը դուրս են բերվում Քելբաջարի շրջանից: Սահմանափակ զորամիավորում տեղակայվելու է Քելբաջարի շրջանի այն տարածքում, որը որոշելու է

Միջազգային Անցումային Հանձնաժողովը՝ մինչև Խաղաղության Համաձայնագրի ստորագրումը:

– Քելբաջարի շրջանը գտնվելու է միջազգային անցումային հանձնաժողովի մոնիտորինգի տակ՝ ԵԱՀԿ հանձնաժողովի միջոցով, որը ներառելու է հայ և ադրբեջանցի ներկայացուցիչներ: Քելբաջարի շրջանի միջազգային անցումային մոնիտորինգի ընթացքում Քելբաջարի շրջանի բնակչության դուրս գալը շրջանից միջազգային հանրության կողմից խրախուսվելու է:

– Ադրբեջանական ներքին տեղահանված անձանց թույլ կտրվի վերադառնալ Քելբաջարի շրջան Խաղաղության Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց:

4) Համաձայնեցված լայնքի միջանցքը պետք է ԼՂ-ն կապի Հայաստանի հետ: Մինչև ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի որոշումը, այդ միջանցքը գտնվելու է ԼՂ ժամանակավոր իշխանությունների վերահսկողության տակ համաձայն ստատուս քվոյի պայմաններին այն պահի դրությամբ, երբ Խաղաղության Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ: ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի որոշումից հետո, միջանցքի օգտագործման գործընթացը կկարգավորվի՝ հաշվի առնելով ԼՂ վերջնական կարգավիճակը:

5) Խաղաղության Համաձայնագրի դրույթների հիման վրա, բոլոր ներքին տեղահանված անձինք և փախստականները ունեն կամավոր հիմքերով վերադարձի իրավունք այն պահից, երբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարը հայտարարի, որ նախկին բնակավայրի անվտանգությունը ապահովված է՝ համաձայն այն դրույթների, որոնք կշարադրվեն Խաղաղության Համաձայնագրում: Իրենց բնակավայրեր վերադարձած բոլոր անձինք, առանց խտրականության, օգտվելու են մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից առանց որևէ խտրականության: Համակեցությանը պետք է նպաստեն կողմերը կամ միջազգային հանրությունը, նպատակ ունենալով մեղմել լարվածությունը, ինչպես նաև՝ կարգավորել հայերի և ադրբեջանցիների տնտեսական, քաղաքական և սոցիալական կենսագործունեությունը:

6) Դուրս բերված շրջանների ապառազմականացումն ու անվտանգությունը դիտարկելու նպատակով միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայումը իրականացվելու է անմիջապես այն բանից հետո, երբ Խաղաղության Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ: Պետությունները խաղաղապահ ուժերի շրջանակում ստորաբաժանումները կտրամադրեն կամավոր հիմունքներով: Խաղաղապահ կոնտինգենտի ընտրությունը իրականացվելու է երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Յուրաքանչյուր կողմը ունի վետոյի իրավունք մյուս կողմի ընտրության վրա: Ադրբեջանը պարտավորվում է չուղարկել ռազմական անձնակազմը և սպառազինությունները ներկայիս շփման գծից այն կողմ՝ բացառությամբ քաղաքացիական բնակչությանը համապատասխան հարաբերակցությամբ ուստիկանական ստորաբաժանումների՝ ինչպես Ադրբեջանի այլ շրջաններում, և ադրբեջանա-իրանական սահմանի երկայնքով գտնվող սահմանապահ գործերի՝ իրենց սպառազինություններով և տեխնիկայով հանդերձ (ադրբեջանա-իրանական սահմանի արևելյան հատվածում ներկայումս յուրաքանչյուր կիլոմետրի վրա պահպանվող համաչափության սահմաններում): Կողմերը պարտավորվում են միմյանց դեմ ուժ չկիրառել թե՛ Լեռնային

Ղարաբաղում, և թե՛ նրա շուրջը: Մինսկի խմբի համանախագահները, խորհրդակցելով Հայաստանի և Ադրբեջանի հետ, մշակելու են երկկողմ և համատեղ անվտանգության երաշխիքներ և հավաստիացումներ՝ համաձայնության կատարմանը և Հարավային Կովկասում ընդհանուր անվտանգությանը սատարելու վերաբերյալ:

7) Կողմերի միջև բաց և անարգել տրանսպորտային և հաղորդակցային կապերը խրախուսվելու են ողջ տարածաշրջանում՝ ներառյալ Ադրբեջանի ուղիղ և անարգել ցամաքային կապը Նախիջևանի հետ, բոլոր սահմանների բացումը և հաղորդակցային ուղիների վերագործարկումը:

8) Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հրավիրված միջազգային դոնորական կոնֆերանսը, համագործակցելով համանախագահող երկրների հետ, ստեղծելու է հիմնադրամ՝ ռազմական գործողություններից տուժած շրջաններում և Լեռնային Ղարաբաղի ներսում ականազերծման և ենթակառուցվածքների վերականգնման համար՝ ներառյալ ճանապարհներն ու հեռուստահաղորդակցությունը:

9) Կողմերը, համագործակցելով համանախագահող երկրների հետ ստեղծելու են չորս առանձին կոմիտեներ: Այդ կոմիտեները գործելու են կոնսենսուսի հիմունքով և զբաղվելու են.

- ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի որոշման հանրաքվեի մանրամասների ու ժամանակի հստակեցմամբ,
- 4-րդ կետում նկարագրված հայեցակարգի հիման վրա միջանցքին վերաբերվող տեխնիկական մանրամասների մշակմամբ,
- այս հիմնարար սկզբունքներում տեղ չգտած բոլոր մնացած հարցերի գնահատմամբ,
- Քելբաջարի շրջանը ԵԱՀԿ հանձնաժողովի միջազգային մշտադիտարկումից Ադրբեջանի վերականգնվող լիակատար վարչական վերահսկողության ներքո փոխանցելու մանրամասների մշակմամբ:

10) Իսաղաղ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց համանախագահող երկրները գումարելու են խորհրդաժողով՝ աշխատանքային խմբերի և Իսաղաղ Պայմանագրի ողջ ծավալով կատարման առաջընթացը քննելու համար:

11) Համանախագահող երկրների ղեկավարած վերահսկիչ հանձնաժողովը կողմերի հետ համաձայնեցված անդամների հետ համատեղ լուծելու են Իսաղաղ Պայմանագրի կատարման հետ կապված բոլոր հարցերը:

12) Կողմերը հրավիրելու են Մինսկի խմբի համանախագահներին՝ Իսաղաղ Պայմանագիրը վկայակոչելու, Իսաղաղ Պայմանագրի կատարմանը հետևելու մտադրությունը հաստատելու և Իսաղաղ Պայմանագրին հավատարմություն պահպանելու ուղղությամբ համապատասխան քայլեր կատարելու համար:

13) Կողմերը համանախագահող երկրների աջակցությամբ ՄԱԿ Անվտանգության խորհրդին խնդրելու են բանաձև ընդունել ի պաշտպանություն Իսաղաղ Պայմանագրի՝ որպես նրա կատարման և միջանկյալ շրջանում ԼՂ բնակչության իրավունքների երաշխիք՝ մինչև ԼՂ կարգավիճակի վերջնական հստակեցումը:

14) Կողմերը համանախագահող երկրների հետ խորհրդակցելուց հետո անհրաժեշտության դեպքում

խնդրելու են ԵԱՀԿ-ին և ՄԱԿ-ին միջոցներ ձեռնարկել՝ Սկզբունքների մասին ԵԱՀԿ Հռչակագրի և ՄԱԿ Խարտիայի համապատասխան:

1. Կողմերը Իսաղաղ Պայմանագրի մշակման աշխատանքը սկսելու են Համանախագահների ներկայությամբ Նախագահների կողմից հիմնարար սկզբունքների հաստատումը ստանալուց անմիջապես հետո և բարեխղճորեն վարելու են նախապատրաստական բանակցությունները, որպեսզի համաձայնությունը կնքվի վեց ամիսների ընթացքում:
2. Արևմտյան Սահարայի շուրջ Միջազգային Արդարադատության Մարմնի խորհրդակցական եզրակացության համաձայն՝ 1975 թ. հոկտեմբերի 16-ը:
3. Հղումներն արվելու են նախքան հակամարտության սկիզբը Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարի տվյալներին:
4. ԼՂ բնակիչների իրավունքներն ու արտոնությունները միջանկյալ շրջանում կողմերը ձևակերպելու են ԼՂ ներկայացուցիչների (ձևաչափը համաձայնեցվելու է) մասնակցությամբ:

## Կազանի փաստաթուղթ (աշխատանքային տարբերակ) միջոցով

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՐՅԱԼԸ  
June 23, 2016

*Ծանոթ. – Այս տարվա սպրիլի 13-ին ամբողջապես, առաջին անգամ գաղտնագրվելով Մադրիդյան փաստաթուղթը (<http://www.aniarc.am/2016/04/13/madrid-principals-armenian-text/>), ԱՆԻ կենտրոնը գրել էր, որ անհրաժեշտության դեպքում կիրառարկայի նաև այդ փաստաթղթից ածանցյալ Կազանի առաջարկությունը՝ աշխատանքային տարբերակը, որը 2011-ի հունիսին մերժել էր Իլիամ Ալիևը: ԱՆԻ կենտրոնը առաջին անգամ հրատարակում է դարաբարդ կարգավորման Կազանի փաստաթղթի առանցքային դրույթները՝ տարածքներ, կարգավիճակ, անվտանգություն, փախստականներ: Այսօր ճիշտ ժամանակն է հայ հանրությանը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում տեղեկացնել Կազանի փաստաթղթի առանցքային մանրամասներին, քանի որ պաշտոնական Երևանը Բաքվի հետ միջնորդների, բանակցում է մեկ բան, իսկ հրապարակավ հայտարարություններում սառած բողոքովին այդ բան: Բացի այդ, այսօր դարաբարդ կարգավորման բանակցություններում ակնկալվում է ճեղքում և ճիշտ ժամանակն է, որպեսզի հայ հանրությունը տեղյակ լինի, թե ինչ են բանակցում երկրի իշխանությունները:*

*Առաջիկայում ԱՆԻ-ն ներկայացնելու է այն առարկությունները, որ ունեցել է Ադրբեջանը Կազանում 2011-ի հունիսին՝ նախագահ Դմիտրի Մեդվեդևի միջնորդությամբ կայացած Մերժ Սարգսյան-Իլիամ Ալիև հանդիպման ընթացքում:*

## ԿԱԶՄՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ (աշխատանքային տարբերակ)

### Տարածքներ

Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվում են Ադրբեջանի վերահսկողության տակ:

Վերադարձի մանրամասները կողմերը համաձայնեցնում են Խաղաղության համաձայնագրով:

Առաջին փուլում վերադարձվում են Ադրամի, Ֆիզուլու, Ջերրայիլի, Չանգեվանի և Ղուբաթլուի շրջանները:

Հետագայում վերադարձվում են Քելբաջարի շրջանն ու Լաչինի շրջանի ոչ միջանցքային հատվածները:

Հայկական ուժերը դուրս են բերվում Քելբաջարի շրջանից: Նախքան շրջանի վերադարձը Ադրբեջանի վերահսկողության տակ, այնտեղ թույլատրվում է հայկական սահմանափակ զորամիավորում՝ մինչև խաղաղության համաձայնագրի ստորագրումը: Հայկական սահմանափակ զորամիավորման տեղակայվելու վայրը որոշելու է Միջազգային անցումային հանձնաժողովը:

Քելբաջարի շրջանը, նախքան Ադրբեջանի վերահսկողության տակ վերադարձը, ԵԱՀԿ հանձնաժողովի միջոցով գտնվելու է Միջազգային անցումային հանձնաժողովի դիտարկման տակ: Հանձնաժողովում ներառվելու են հայ և ադրբեջանցի ներկայացուցիչներ: Միջանկյալ ժամանակահատվածում խրախուսվելու է, որպեսզի Քելբաջարի շրջանի հայ բնակչությունը հեռանա այնտեղից:

Ադրբեջանի ներքին տեղահանված անձանց թույլ է տրվում վերադառնալ Քելբաջարի շրջան Խաղաղության համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց:

Լաչինի շրջանի այն հատվածները, որոնք դուրս են Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցքից, Ադրբեջանի վերահսկողության տակ են վերադարձվում Խաղաղության համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

### Անվտանգության երաշխիքներ

Հայկական ուժերի կողմից վերահսկվող ադրբեջանական շրջաններից դուրս բերվելուց հետո այնտեղ տեղակայվում են խաղաղապահ ուժեր՝ ապառազմականացումն ու անվտանգությունը դիտարկելու նպատակով: Խաղաղապահ ուժերը ձևավորում են պետությունները՝ կամավոր հիմունքներով: Խաղաղապահների ընտրությունը իրականացվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Յուրաքանչյուր կողմը ունի վետոյի իրավունք մյուս կողմի ընտրության վրա:

Կողմերը պարտավորվում են միմյանց դեմ ուժ չկիրառել Լեռնային Ղարաբաղում և նրան հարակից շրջաններում: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, խորհրդակցելով Հայաստանի և Ադրբեջանի հետ, մշակում են երկկողմ և համատեղ անվտանգության երաշխիքներ և հավաստիացումներ՝ համաձայնության կատարմանը և Հարավային Կովկասում ընդհանուր անվտանգությանը սատարելու վերաբերյալ:

Ադրբեջանը պարտավորվում է չուղարկել ռազմական անձնակազմ և սպառազինություններ ներկայիս շփման գծից այն կողմ, բացառությամբ ոստիկանական ստորաբաժանումների և ադրբեջանա-իրանական սահմանի երկայնքով գտնվող սահմանապահ զորքերի:

### Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ

Մինչև Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշումը, Լեռնային Ղարաբաղը ստանում է միջանկյալ կարգավիճակ, որը նրա բնակիչներին տալիս է որոշակի իրավունքներ և արտոնություններ: Դրանք շարադրվելու են Խաղաղության համաձայնագրում, մասնավորապես՝

Լեռնային Ղարաբաղի բնակիչները ունենում են ժողովրդավարական հասարակության մեջ սոցիալական ու տնտեսական կենսագործունեությունն ու անվտանգությունը պաշտպանելու և վերահսկելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգվում են:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը՝ միջանկյալ շրջանում Լեռնային Ղարաբաղը կառավարելու նպատակով, իրավունք է ստանում ընտրել իշխանության մարմիններ, որոնք իրականացնում են օրենսդիր և գործադիր իշխանություն Լեռնային Ղարաբաղի ներքին հարցերում: Արդարադատություն իրականացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղը իրավունք ունի հիմնել դատարաններ: Լեռնային Ղարաբաղի պաշտոնյաները արտաքին շփումներ իրականացնելու լիազորություններ կունենան այն ոլորտներում, որոնք սահմանվում են Խաղաղության համաձայնագրով:

Լեռնային Ղարաբաղի միջանկյալ իշխանությունները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկվում են անմիջականորեն Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպություններին, որոնցում միջազգայնորեն ճանաչված լինելու կարգավիճակը նախապայման չէ:

Լեռնային Ղարաբաղն իրավունք է ունենում ստանալ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն՝ պայմանով, որ այդ օժանդակությունը նախատեսված լինի մարդու իրավունքների, խաղաղ տնտեսական և ժողովրդավարական զարգացման, մշակութային և առևտրային կապերի համար կամ հիմնական մարդասիրական պահանջների բավարարմանը:

### Ազատ կամարտահայտություն

Լեռնային Ղարաբաղի իրավական վերջնական կարգավիճակը որոշվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտության միջոցով: Բվեարկության ժամկետներն ու մանրամասները կողմերը համաձայնեցնում են ապագա բանակցություններում:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ասելով հասկացվում է 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը: Բվեարկության ժամանակ ապագա կարգավիճակի հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն:

### Լաչինի միջանցք

Համաձայնեցված լայնքի միջանցքը պետք է Լեռնային Ղարաբաղը կապի Հայաստանի հետ: Մինչև Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը, այդ միջանցքը գտնվում է Լեռնային Ղարաբաղի

ժամանակավոր իշխանությունների վերահսկողության տակ:

Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումից հետո, միջանցքի օգտագործման գործընթացը կկարգավորվի՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը:

### **Փախստականներ**

Բոլոր ներքին տեղահանված անձինք և փախստականները ունեն կամավոր վերադարձի իրավունք այն պահից, երբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարը կհայտարարի, որ նախկին բնակավայրի անվտանգությունն ապահովված է:

Իրենց բնակավայրեր վերադարձած անձինք օգտվում են մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից՝ առանց որևէ խտրականության:

### **Ազաշրջափակումներ**

Կողմերի միջև բաց և անարգել տրանսպորտային և հաղորդակցային կապերը խրախուսվում են ողջ տարածաշրջանում՝ ներառյալ Ադրբեջանի ուղիղ և անարգել ցամաքային կապը Նախիջևանի հետ, բոլոր սահմանների բացումը և հաղորդակցային ուղիների վերագործարկումը:

### **Դոնորների խորհրդաժողով**

Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հրավիրված միջազգային դոնորների խորհրդաժողովը, համագործակցելով համանախագահող երկրների հետ, ստեղծում են հիմնադրամ՝ ռազմական գործողություններից տուժած շրջաններում և Լեռնային Ղարաբաղի ներսում ականազերծման և ենթակառուցվածքների վերականգնման համար:

### **Հանձնաժողովներ**

Կողմերը, համագործակցելով համանախագահող երկրների հետ, ձևավորում են առանձին հանձնաժողովներ: Այդ հանձնաժողովները գործում են կոնսենսուսի հիմունքներով և զբաղվում են Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշման հանրաքվեի մանրամասների ու ժամկետների հստակեցմամբ, Լաչինի միջանցքին վերաբերվող տեխնիկական մանրամասների և Զեյրաջարի շրջանը ԵԱՀԿ հանձնաժողովի միջազգային մշտադիտարկումից Ադրբեջանի վարչական վերահսկողության ներքո փոխանցելու մանրամասների մշակումով:

ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի, Ղրղստանի Հանրապետության խորհրդարանի Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի և Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ 1994 թվականի մայիսի 4-5-ը Բիշքեկ քաղաքում անցկացված հանդիպման մասնակիցն էրը.-վճռակառուցություն արտահայտեցին ամենայն կերպ օժանդակել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը գինված հակամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անուղղելի վնաս է հասցնում ադրբեջանական և հայ ժողովուրդներին, այլև էականորեն շոշափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը, լրջորեն բարդացնում միջազգային իրավիճակը,-աշտպանելով ԱՊՀ պետությունների երկրների ղեկավարների 1994 թվականի ապրիլի 15-ի խորհրդի հայտարարությունը, պատրաստակամություն հայտնեցին լրիվ աջակցություն ցուցաբերել գինված դիմակայության դադարեցմանը և նրա հետևանքների վերացմանն ուղղված գործադիր իշխանության ներկայացուցիչների ու ղեկավարների ջանքերին՝ համապատաս-

խան համաձայնագրի շուտափույթ կնքման միջոցով, - հանդես եկան հակամարտության դադարեցման գործում Համագործակցության և Միջխորհրդարանական վեհաժողովի բնական ակտիվ դերի, դրա հետ կապված ՄԱԿ-ի և ԵԱՀԿ սկզբունքների, նպատակների և կոնկրետ խնդիրների իրագործման օգտին /ամենից առաջ Անվտանգության խորհրդի 822, 853, 874, 884 բանաձևեր/, -կոչ արեցին բոլոր հակամարտող կողմերին լսել ողջախոհության ձայնը. մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնելու կարգի հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի արձանագրության վրա /այդ թվում և դիտորդների տեղակայման մասով/, և արդյունավետ աշխատանքով սերմ օրերի ընթացքում այն ամրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական և թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրս բերում և հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ,-համաձայնվեցին առաջարկել ԱՊՀ անդամ-պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահ Վ.Ֆ. Շումեյկոյի և վեհաժողովի խաղաղար խմբի ղեկավար Մ.Շ.Շերիմկուլովի նախաձեռնությունը Համագործակցության խաղաղարար ուժերի ստեղծման մասին, նպատակահարմար գտան շարունակել նման հանդիպումները՝ ի շահ գինված հակամարտությունների խաղաղ լուծման,-երախտագիտություն հայտնեցին Ղրղստանի ժողովրդին և ղեկավարությանը՝ աշխատանքի համար հիանալի պայմաններ ստեղծելու, սրտաբացության և հյուրընկալության համար:

Պատվիրակությունների անունից՝

Ա.Ջալիլով/Ռ.Գուլիևի ստորագրությունը/

Կ.Բարույան

Բ.Արարկյան

Վ.Շումեյկո

Մ.Շերիմկուլով

Վ.Կազիմիրով/Ռուսաստանի Դաշնության Նախագահի լիազոր ներկայացուցիչ, Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար/

Մ.Կրտով/ԱՊՀ անդամ-պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավար:

**Բիշքեկ 5 մայիսի 1994թ.**

## **Պապիկիս եւ նրա եղբորը Ցեղասպանության ժամանակ փրկել են գերմանացի սպաները.**

### **Նուբար Աֆեյան**

Մենք դեռեւս ամբողջությամբ երախտագիտություն չենք հայտնել Ցեղասպանության ժամանակ հայերին փրկած անձանություններին: Այս մասին այսօր՝ մայիսի 28-ին, Կոմիտասի թանգարանում ասաց «Ավորդա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Flagship Pioneering ընկերության գործադիր տնօրեն, ձեռներեց Նուբար Աֆեյանը:

Նուբար Աֆեյանը պատմեց, որ Ցեղասպանության ժամանակ իր պապիկին եւ նրա եղբորը փրկել են գերմանացիները:

«Պապիկս եւ նրա եղբայրը հայտնի գործարարներ էին, Ստամբուլում ներկայացնում էին գերմանական բանկ:



Յեղասպանության ժամանակ նրանց, ինչպես եւ մյուսներին, սկսեցին քշել իրենց քաղաքից: Նրանք քշվել են մինչեւ այն կայարանը, որը եղել է գերմանացիների վերահսկողության տակ: Պապիկս կապուտայա էր եւ գերմաներեն էր խոսում, այդ պատճառով գերմանացի սպաները նրանց վերցրել էին իրենց հետ եւ այսպիսով փրկել»,- ասաց Նուբար Աֆեյանը:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրը նշեց, որ իր ընտանիքի պատմությանը ծանոթացել է բուլղարական պարբերականներից մեկի միջոցով, որում հրատարակում է եղել Աֆեյաններին փրկած գերմանացիների մասին:

Նուբար Աֆեյանի ելույթից հետո բեմ բարձրացավ նրա դուստրը, որը կատարեց Կոմիտասի կատարումներից մեկը: Նշենք, որ միջոցառմանը ներկա էին նաեւ Հայաստանում Գերմանիայի դեսպանը, Ռոբերտ Բոշ հիմնադրամի ներկայացուցիչները եւ այլ հյուրեր արտերկրից:

«Կոմիտասի ժառանգությունը» միջոցառման ավարտին հյուրերը շրջելու են թանգարանով:

## Հայաստանում մատոնական օթյակի հիմնադրումը իշխանության համաձայնությամբ է կատարվում. Գուրգեն Եղիազարյան



«Ես տեղյակ չեմ, թե ինչ նպատակներ է հետապնդում Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մատոնական օթյակի (Grand Orient de France) Հայաստանում օթյակ բացելու

նախաձեռնությունը: Բայց ես «Մեծ Արևելք» ֆրանկոմատոնական օթյակի հետ կապված կարևորում եմ պատմական փաստերը, որը մեզ համար չափազանց ուսուցողական նշանակություն ունի»,- Hayeli.am-ի հետ զրույցում նման կարծիք հայտնեց ԱԸՄ պետի նախկին տեղակալ Գուրգեն Եղիազարյանը՝ անդրադառնալով հարցին, թե ինչպես է գնահատում Հայաստանում գտնվող Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մատոնական օթյակի (Grand Orient de France) դեկավար, Մեծ վարպետ Զրիստոֆ Հաբբասի այն հայտարարությունը, թե իրենք Հայաստան են ժամանել մեր երկրում մատոնական օթյակի հիմնադրվելու առիթով:

Գուրգեն Եղիազարյանի խոսքով՝ 1900 թվականին «Մեծ Արևելք» ֆրանկոմատոնական օթյակը դիմում է սուլթանին՝ Թուրքիայի տարածքում գործունեություն ծավալելու առաջարկով. «Սուլթանը նրանց կոպտորեն մերժեց, ավելին, կարելի է ասել, վնասեց երկրից: Դրանից հետո նա կառավարեց ընդամենը 8 տարի, որից հետո երիտթուրքերը, որոնք մատոնական «Մեծ Արևելք» օթյակի անդամներ էին, նրան գահընկեց արեցին: Թուրքիայում ստեղծվեց «Մեծ Արևելք» մատոնական օթյակը, որի հիմնադիրները հրեաներ էին: Օթյակի առաջին հիմնադիր տեյակտ Չավիդին, Շուքրին և Շաքիրին են, երկրորդ տեյակը, այսպես կոչված, գործադիր մարմինը նույնպես հրեաներ Թալիաթը, Էնվերը և Ջեմալն են:

Մահմանադրության ընդունումից հետո նրանց գլխավորությամբ երիտթուրքերը վերցրեցին իշխանությունը: «Մեծ Արևելք» մատոնական օթյակի զինանշանի վրա է 2 աստղ կա՝ վերևում Սողոմոն իմաստունի հնգաթև աստղն է պատկերված / ինչպես Կրեմլի աշտարակների վրա/, դրանից ներքև Դավիթի վեցաթև աստղն է, ամենաներքևում էլ դաջված է ֆրանսիական հեղափոխության «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» կոչը: «Մեծ Արևելք» մատոնական օթյակի հայտնի դեմքերից են Ժաբոտինսկին և Գելֆանդ Պարվուսը: 1915 թվականի ապրիլի 24-ին Թուրքիայում ձերբակալված և հետագայում սպանված հայ մտավորականների ցուցակը Պարվուսն անձամբ է կազմել և փոխանցել երիտթուրքերին՝ ի կատարումն : Ցավոք, այն ժամանակ էլ կային հայեր, օրինակ՝ Գրիգոր Չոխրապը, ով «Մեծ Արևելք» մատոնական օթյակի անդամ էր և թուրքական մեջլիսի պատգամավոր: Բայց դա չխանգարեց, որ նա ևս դառնար Մեծ եղեռնի զոհ»,- հայտարարեց Գուրգեն Եղիազարյանը:

Նրա խոսքով՝ Եվրոպական Միության ստեղծումը ևս ֆրանկոմատոնական օթյակի ծրագիրն էր, որը պլանավորվել էր դեռևս 1717 թվականին և իրականություն դարձավ միայն մոտ 200 տարի անց: Նրանց ծրագրերից է եղել նաև Իսրայել պետության ստեղծումը, որը հետագայում իրականություն դարձավ. «Եթե «Մեծ Արևելք» մատոնական օթյակը Հայաստանում օթյակ է հիմնադրում, նշանակում է դա համաձայնեցված է իշխանության հետ՝ Հայաստանում այլ կերպ այդ հարցը չէր կարող լուծում ստանալ: Մնում է հասկանալ, թե ինչ պլաններ է կազմել Հայաստանի համար ֆրանկոմատոնական օթյակը: Այս հարցի պատասխանն այսօր դժվար է իմանալ, դա կերևա հետո. ես առաջարկում եմ միասին խորհել՝ ի՞նչ է ծրագրել ֆրանկոմատոնական օթյակը: Տա Աստված, որ անցյալ դարի պատմությունը այս անգամ չկրկնվի»,- նշեց Գուրգեն Եղիազարյանը:

Մեր հարցադրմանը, թե Ֆրանսիայի «Մեծ Արևելք» մասոնական օթյակի (Grand Orient de France) ղեկավար, Մեծ վարպետ Քրիստոֆ Հարբասին չի թաքցրել, որ նրանք Հայաստանի քաղաքական էլիտայում ունեն ներկայացուցիչներ, իրեն հայտնի՝ են անուններ, Գուրգեն Եղիազարյանը պատասխանեց, որ չի հետաքրքրվել, չգիտի, թե ովքեր են այդ անդամները: Հիշեցնենք, որ «Առավոտ»-ի հետ զրույցում «Մեծ Արևելք» մասոնական օթյակի ղեկավարն ասել էր, որ օթյակի ստեղծման առաջին պայմաններից մեկը անդամների առկայությունն է. «Գործընթացը վաղուց էր սկսված, և այժմ Հայաստանում կլինի ինքնավար ու անկախ ֆրակցիոնալ մասոնական օթյակ», - ասել էր Քրիստոֆ Հարբասին:

*Կարինե Սարիբեկյան*

## Մշակույթ

### Ակնարկ Հայ ժողովրդի հայրենադարձությանը

19-20-րդ դարերում

*Դր. Էդիկ Բաղդասարյան*

#### Հայրենադարձության կազմակերպումը (1920-1930-ական թվականներին)

##### Հայրենադարձության հիմնախնդիրը

Քեմալական Թուրքիայի ջանքերով եւ մեծ տերութունների կողմից Հայկական հարցի տապալումից հետո գործնական նշանակություն ստացավ հայ գաղթականությանը տեղավորելու խնդիրը: Թուրքիան խստորեն մերժեց իր երկրում (հայկական տարածքներում) «Հայկական ազգային օջախ» կազմակերպելու առաջարկները: Ազգային օջախի ստեղծումը, ճիշտ է, Հայկական հարցի հետ նույնական չէր, այնուամենայնիվ կունենար դրական խոշոր նշանակություն: Այն հայ գաղթականությանը թույլ կտար համահավաք մնալ բուն հայրենիքում եւ ունենալ հետագա պայքարի հեռանկար:

Շատ խոսվեց ցեղասպանության ենթարկված արեւմտահայ ժողովրդի կենդանի մնացածներին օգնություն ցույց տալու, այս կամ այն երկրում նրանց հավաքելու անհրաժեշտության մասին: Սակայն գործնականում ոչինչ չէր արվում օգնություն կազմակերպելու ուղղությամբ: Տերությունների անտարբեր վերաբերմունքի քննադատությամբ հանդես եկավ մեծ մարդասեր, Ազգերի լիգայի ներկայացուցիչ, նորվեգացի բեռնախույզ Ֆրիտյոֆ Նանսենը իր «Խաբված ժողովուրդ» գրքով:

Թուրքիայի մերժումից հետո մատնանշվում էին ամենատարբեր երկրների անուններ՝ տեղավորելու համար ցեղասպանության վերապրողներին: Իսկ Լոզանի կոնֆերանսի ժամանակ Ռուսաստանի արտգործօրդկոմ Գ. Չիչերինը հայտարարեց իր երկրում 250 հազար հայ գաղթականներ ընդունելու պատրաստակամության մասին, որը, սակայն, չիրականացվեց:



Ֆրիտյոֆ Նանսեն

Հայ գաղթականության հարցի հրատապ լուծման միակ իրական ելքը Խորհրդային Հայաստանն էր, որը, սակայն, զուրկ էր համապատասխան նյութական հնարավորություններից:

Այնուամենայնիվ հանրապետության ղեկավարությունը չէր կարող անտարբեր մնալ հայ գաղթականների նկատմամբ:

1922 թ. նոյեմբերին Անդրերկրկոմի բարտուղար Ալ. Մյասնիկյանը նամակով դիմեց Ռուսաստանի ղեկավարներ վ. Լենինին, Ի. Ստալինին եւ Գ. Չիչերինին, որպեսզի կազմակերպվի 50 հազար հայերի հայրենադարձություն, նրանց տեղավորելով Ռուսաստանի եւ Անդրկովկասի քաղաքներում:

1924 թ. Անդրկենտգործկոմը որոշում կայացրեց 10 հազար հայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին: 1925թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմը հայրենադարձության առաջադրանքը հասցրեց 25 հազարի, հույս ունենալով նրանց զգալի մասին բնակեցնել Հյուսիսային Կովկասում: Հայաստանում ընտրվել էր Սարգսրապատի դաշտը, որը նախապես պետք է դառնար ոռոգելի՝ ջրանցք անցկացնելու միջոցով: Սկսվեցին որոնումները Ֆինանսական միջոցներ հայթայթելու ուղղությամբ: Այդ նպատակով 1925թ. Հայաստան ժամանեց Ֆ. Նանսենի ղեկավարած Ազգերի լիգայի հանձնախումբը, որը պետք է ուսումնասիրեր Սարգսրապատի դաշտի ոռոգման հնարավորությունները: Հանձնախմբի գալը կապված էր նաեւ Ազգերի լիգայի 1923թ. որոշման հետ, ըստ որի պետք է ուսումնասիրվեր Հայաստանում 50 հազար գաղթականներ տեղավորելու հնարավորությունը: Սակայն այս ծրագրի իրականացման միջոցներ գտնելու որոնումները եւս ապարդյուն անցան: Ինչպես Հայկական հարցի, այնպես էլ հայրենադարձության դեպքում արեւմտյան տերությունների համար անցանկալի էր քայլ կատարելը, որովհետեւ հարցն առնչվում էր խորհրդային իշխանության հետ: Այսինքն՝ առաջնայինը հարցի քաղաքական կողմն էր: Այս ամենից հետո էր, որ Ֆ. Նանսենը տպագրեց իր վերոհիշյալ մերկացնող գիրքը (1927թ.)<sup>1</sup>:

<sup>1</sup> - Հայրենիք- Սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը, Երեւան, 1985, էջ 22, 122, 125-134, 136-151:

Հայրենադարձության գործընթացը

Ցեղասպանության վերապրողների վիճակն օրհասական էր հատկապես Միջագետքում, Թուրքիայում, Հունաստանում, Սիրիայում, Բուլղարիայում եւ այլ երկրներում: Միջագետքում 14 հազար վասպուրականցի գաղթականներ զրկվել էին աշխատանքի ու ապրուստի միջոցներից, որ մի քանի տարի իրականացրել էին անգլիական իշխանությունները: Նրանք բախում էին խորհրդային Հայաստանի դռները՝ կազմակերպելու շուտափույթ օգնություն: Թուրքիայից 1,5 միլիոն հույների Հունաստան արտաքսելը այստեղ միանգամից ծանրացրեց հայ գաղթականների առանց այն էլ անմխիթար դրությունը: Իսկ Թուրքիայի մայրաքաղաքից հազարավոր հայեր 1922 թ. վերջին արտագաղթեցին Սիրիա եւ այլուր:

Խորհրդային Հայաստան առաջին հայրենադարձիկները եղան վասպուրականցիները (շուրջ 9000 մարդ) 1921-1922թթ.: 1923 թ. հայրենադարձություն տեղի ունեցավ Թուրքիայից, Իրանից եւ այլ երկրներից, 1924թ.՝ նույն երկրներից, ինչպես նա եւ Սիրիայից, Ֆրանսիայից:

Հայաստանի կառավարությունը 1926թ. որոշեց դադարեցնել զանգվածային ներգաղթը՝ նկատի ունենալով ներգաղթածների տեղավորման դժվարությունները, ինչպես նաեւ տեղի ունեցած Շիրակի երկրաշարժը: Հայրենադարձության գործընթացում որոշ բեկում կատարվեց 1930-ական թվականների սկզբին: 1931թ. նախատեսվեց կազմակերպել նոր զանգվածային ներգաղթ: Այդ կապակցությամբ արտասահման մեկնեց կառավարության նախագահ Սահակ Տեր-Փաբրիկյանը, հանդիպում ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկավար Գալուստ Կյուլպենկյանի հետ՝ ակնկալելով միության օժանդակությունը:

Ի կատարումն 1931 թ. հիշված որոշման՝ 1932-1933 թթ. Հայաստանն ընդունեց շուրջ 8000 հայրենադարձ՝ Հունաստանից, Սիրիայից եւ այլ երկրներից: Հայրենադարձության հաջորդ, ընդ որում վերջին՝ մինչեւ 1946 թ., ձեռնարկն իրականացվեց 1936 թ.: Ֆրանսիայից ժամանեցին 1800 հայրենադարձներ, որոնց հետ Երեւան փոխադրվեց Կոմիտասի (Սողոմոն Սողոմոնյան) աճյունը եւ հողին հանձնվեց նրա անունը կրող քաղաքային այգում (պանթեոնում):

1920-1930-ական թվականներին խորհրդային Հայաստան վերադարձավ շուրջ 42 հազար մարդ: Շատ ավելին էր հայրենադարձվել ցանկացողների թիվը: Սակայն խորհրդային Հայաստանի հնարավորությունները խիստ սահմանափակ էին:

Երկրում ծայր առած քաղաքական բռնաճնշումների պայմաններում 1937 թ. դադարեցվեց հայրենադարձության գործընթացը: Վերացվեց ՀԽՍՀ կառավարությանը կից ներգաղթի կոմիտեն, ապա նա եւ այդ խնդիրներով զբաղվող Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)<sup>2</sup>:

<sup>2</sup> - Նույն տեղում, էջ 73-110:

ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ  
(1921-1936 թթ.)

Խորհրդային Հայաստանը իր կազմավորման առաջին օրերից իրեն հոգատար էր զգում սփյուռքահայության հանդեպ: Հայրենիքը դեպի իրեն էր գրավում մեծ թվով սփյուռքահայերի: Գաղութահայերի մեջ սկիզբ էր առել եւ արագորեն ծավալվում էր հայրենասիրական շարժումը՝ «դեպի տուն», դեպի «ավետյաց երկիր»:

Հայաստանի կառավարությունը անընդհատ բազմաթիվ դիմումներ ու նամակներ էր ստանում սփյուռքահայությունից, իրենց Հայաստան գալու հնարավորություն ընձեռելու խնդրանքով: Սկզբնական շրջանում հատկապես շատ դիմումներ էր ստացվում Միջագետք (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին դժնդակ պայմաններում: Դրանք հիմնականում վասպուրականցիներ էին, որոնք թուրքերի հարձակման հետեւանքով 1918 թվականի գարնանը զանգվածաբար փորձել էին փախչել Անդրկովկաս, սակայն Վան-Իգդիր ճանապարհը թուրքական բանակի կողմից փակվելուց հետո, ստիպված երկարատեւ ճանապարհ էին կտրել դեպի Պարսկաստան, հույս ունենալով այնտեղից անցնել Անդրկովկաս. նրանց այդ մտադրությունը եւս չի իրականանում, քանի որ թուրքական զորքերն արդեն մտել էին Պարսկաստան եւ փակել դեպի Անդրկովկաս տանող ճանապարհը: Վասպուրականցիները եւ նրանց միացած խոյի, Սալմաստի եւ Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները ստիպված շարժվում են դեպի Հարավային Պարսկաստան: 1918 թվականի հունիսի վերջերին Պարսկաստանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը գաղթականների այդ զանգվածը որոշակի նկատառումներով օգտագործելու համար վերցնում է իր «հովանավորության» տակ: Նահանջող գաղթականները օգոստոսի սկզբներին հասնում են Համադան, բայց անգլիական իշխանությունները արգելում են նրանց մտնել քաղաք: Անգլիացիները համոզում են գաղթականներին, թե ստեղծված պայմաններում ամենահարմար ելքն այն է, որ տեղավորվել Միջագետքում, մի առժամանակ այնտեղ մնան, խոստանալով հետագայում նրանց տեղափոխել Հայաստան<sup>3</sup>:

Միջագետքի սահմանը ոտք կոխելուց հետո անգլիացիները բացի նրանցից, ովքեր համաձայնվում են ընդգրկվել անգլիական զորքերի կազմում, անմիջապես զինաթափում են հայերից ու ասորիներից բաղկացած յոթ հազարի հասնող գաղթականների պաշտպաններին: Ստեղծվում է մի քանի հայ-ասորական գումարտակներ եւ ուղարկվում Զենջան՝ օգնելու թուրքերի դեմ կռվող անգլիական զորքերին: Գաղթականները կարճ ժամանակամիջոցում համոզվում է, որ անգլիական գաղթականների իսկական նպատակն է ստեղծել հայերից ու ասորիներից բաղկացած զինված ուժեր եւ նրանց

<sup>3</sup> - Հայ Ժողովրդի Պատմություն, Հատոր 7, էջ 548:

միջոցով իրենց դիրքերն ամրապնդել արաբական աշխարհում, միաժամանակ անձեռնմխելի դարձնել Հարավային Պարսկաստանի ու Միջագետքի նավթահանքերը: Շուտով հայ գաղթականությունը ծառանում է այդ խաբեության դեմ եւ անգլիական իշխանություններից պահանջում իրագործել Հայաստան փոխադրելու մասին տրված խոստումները: Անգլիական իշխանությունները, զգալով գաղթականության բուռն ըմբոստացումը, ակտում են ձեռքարկել ու պատիժների եթթարկել առավել աչքի ընկնող տարրերին, իսկ հիմնական զանգվածին՝ զինված պահակամբերի հսկողության տակ, փոխադրում են Բաղդադի շրջանը, որտեղ նրանց տեղավորում են հատուկ ճամբարներում:

Ըստ վկայությունների, 1918 թվականի աշնանը Համադանում, Քերմանշահում եւ Բաքուբայում գտնվում էին ավելի քան 16,000 հայ (այլ աղբյուրների համաձայն միայն Բաքուբայում կային 18-19 հազար հայեր): Այսպիսով Վասպուրականի, Ուրմիայի, Սալմաստի եւ Նոյի տարագիր հայություն մեծ մասը տեղափոխված էր Բաղդադից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում<sup>4</sup>:

1921 թվականների հուլիսի 2-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը հատուկ կոչով դիմեց Համադանի, Քերմանշահի, Մոսուլի եւ Նահր-էլ-Օմարի գաղթականության:

«... Ձեռք առնելով Հայաստանի իշխանությունը, այժմ մեր առաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք ձեր տառապանքներին այլևս միանգամայն ընդմիշտ վերջ տալու՝ անխուսափելի եւ անհրաժեշտ պահանջներին»:

1921թ. ամռանը Միջագետքի գաղթականության ներկա-յացուցիչները բանակցությունների մեջ մտան Թավրիզում գտնվող խորհրդային Հայաստանի գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երեւան մեկնած իրենց ներկայացուցիչներ միջոցով՝ Ժողովրդական կոմիսերների խորհրդի (կառավարության) նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ եւ խնդրեցին շուտափույթ կերպով գաղթականությանը տեղափոխել Հայաստան<sup>5</sup>:

1921թ. թվականի դեկտեմբերի 13-ին խորհրդային Հայաստանի կառավարության որոշումով, դեկտեմբերի կեսերին Միջագետքից Բաթում ժամանեց առաջին շոգենավը՝ մոտ 3,000 գաղթականով, որոնք հիմնականում տեղավորվեցին Գյումրիի, Բասարգեշարի եւ Ղամարուի շրջաններում: Իսկ 1922 թ. հունվարի 10-ին՝ 3,000 մարդուց բաղկացած երկրորդ քարավանը: Հաջորդ տարիներին Միջագետքում մնացած հայ գաղթականության մեծ մասը նույնպես վերադարձան խորհրդային Հայաստան (Ավելի քան 9,000 մարդ, 1921թ. վերջերին եւ 1922 թ. սկզբներին)<sup>6</sup>:

1922 թ. գաղթականներից էր հայ նշանավոր բանաստեղծ Գեղամ Սարյանը<sup>7</sup>:

Երբ Միջագետքի տարագիրների առաջին քարավանների հայրենադարձության լուրը հասավ հայկական մշուս գաղթօջախներ, էլ ավելի բուռն դարձավ խորհրդային Հայաստան ներգաղթելու սփյուռքահայերի ձգտումը: Ի պատասխան Հայաստան ներգաղթելու դիմումների, Հայոց կառավարությունը 1923 թվականին իրականացրեց մոտ 1,000 հոգու ներգաղթը Վանից, Պարսկաստանից եւ այլ վայրերից: 1924թ. մարտի 3-ին որոշում կայացվեց 1924-1925 թվականների ընթացքում արտասահմանյան երկրներից խորհրդային Հայաստան ընդունել 10,000 գաղթական: Այդ նպատակով հատկացվեց 1.7 միլիոն ռուբլի: 1924 թվականի մայիսից սկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը Բաթումի եւ Զուլֆայի վրայով<sup>8</sup>:

1925թ. ընթացքում Բաթումով եւ Զուլֆայով հայրենիք ներգաղթեցին 5,016 մարդ, այդ թվում Հունաստանից 1,098 ընտանիք (3656 մարդ), Կ. Պոլսից՝ 201 ընտանիք ( 780 մարդ), Բաղդադից եւ ընդհանրապես Միջագետքի՝ 160 ընտանիք (385 մարդ)<sup>9</sup>:

1921-1925 թվականների ընթացքում արտասահմանից ներգաղթածների թիվը, կազմելով ստորեւ բերված աղյուսակը<sup>10</sup>.

1921 - Միջագետքից	3,000 հոգի
1922 - Միջագետքից, Իրանից, Կ Պոլսից, և 6,552	
1923 - Վանից, Իրանից, եւ այլ վայրերից	953
1924 - Հունաստանից, Սիրիայից, Կ. Պոլսից եւ այլ վայրերից՝	4,167
1925 - Հունաստանից, Միջագետքից <sup>11</sup> , Կ. Պոլսից եւ այլ վայրերից	5,016
Ընդամենը .....	19,688 մարդ

Մինչդեռ խորհրդային Հայաստանի կառավարությունն իր մարդասիրական պարտքն էր կատարում հայ գաղթականության նկատմամբ եւ ամեն ինչ անում էր նրա դրույթունը բարելավելու ուղղությամբ, գաղութահայ բարեգործական որոշ հաստատություններ ու կազմակերպություններ շոշափելի ոչինչ չէին անում գաղթա-կանությունը հայրենիք տեղափոխելու ուղղությամբ: Այդ տեսակետից խիստ բնորոշ է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությունը, որը ինչպես նշում է նրա վարչության նախկին անդամ եւ Հայաստանի Օգնության Կոմիտեի (ՀՕԿ) արտասահմանյան լիազոր Եսայի Կարինյանը «արդեն երկու տարի է ի վեր

<sup>4</sup> - Նույն տեղում, էջ 549:  
<sup>5</sup> - Նույն տեղում, էջ 550:  
<sup>6</sup> - Նույն տեղում, էջ 551:

<sup>7</sup> - Բաբկեն Զուլասզյան, Հայերանարձ իրանահայ դեմքեր, Երեւան 1997, էջ 153:  
<sup>8</sup> - Հ. Ու. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները եւ Հայրենադարձությունը, Երեւան 1985, էջ 87:  
<sup>9</sup> - Նույն տեղում, էջ 99:  
<sup>10</sup> - Նույն տեղում, էջ 105:  
<sup>11</sup> - Միջագետքից ներգաղթողների մեջ կային նաև հայեր Նոյից, Սալմաստից եւ Ուրմիայից:

խոշոր ռեքլամներով ճամբա ելած է դեպի Հայաստան, կքալե ու կքալե եւ դեռ կեցած տեղն է, քայլ մը առաջ շաներ...»<sup>12</sup>:

Արտասահմանյան բարեգործական շատ կազմակերպություններ ու անհատներ գաղթականների ու որբերի հարցը փաստորեն դարձրել էին իրենց քաղաքական հիմնական առանցքն ու եկամտի աղբյուրներից մեկը<sup>13</sup>: Դաշնակցության «Հայաստանի Հանրապետության պատվի-րակույթունը», Պողոս Նուպարի, իսկ հետո Գաբրիել Նորատուհկյանի գլխավորած «Ազգային պատվիրակությունը» եւ այլ հաստատություններ փաստորեն իրենց գոյությունը պահպանում էին ծայրահեղ թշվառության մատնված գաղթականների եւ որբերի հարցի շահագործման հաշվին:

1924 թվականի մայիսին Պոլսից հորհրդային Հայաստանի կառավարությանը ուղարկած իր ղեկուցագրում Դ. Շահվերդյանը հայտնում էր, որ «ներգաղթի կազմակերպումը մեծ հետաքրքրություն է առաջացրել ժողովրդական զանգվածների մեջ, ինչպես այստեղ, այնպես էլ մյուս գաղութներում: Բայց սփյուռքահայ ազգային բարեգործական հաստատությունների ղեկավարները խիստ անհանգստացած են: Բանն այն է, որ այդ հաստատությունների մեծ մասն իրենց գոյությունը պահպանում էին գաղթականների եւ որբերի հարցը շահագործելով եւ նրանցով արդարացնում իրենց գոյության իմաստը, նրանց շնորհիվ ստանում պաշտոններ ու ապրուստի միջոցներ»<sup>14</sup>: Խոսելով հորհրդային Հայաստանի հակառակորդների կողմից ներգաղթի շուրջը ծավալված զրպարտչական քարոզչության մասին, Դ. Շահվերդյանը նշում է, որ նրանք առաջարկում են երկրի վերաշինության ու ներգաղթի համար գաղութներում հանգանակված գումարները շուղարկել Հայաստան, այլ օգտագործել միայն արտասահմանում<sup>15</sup>: Դեռ ավելին, Պոլսում գոյություն ունեցող ազգային կազմակերպությունները 1924 թվականներին իրենց գաղտնի ժողովներից մեկում որոշում էին կայացրել գաղթականներին չփոխադրել Հայաստան, այլ տեղավորել Աֆրիկայում կամ Ամերիկայում<sup>16</sup>:

Պատերազմի ավարտից հետո արեւմտյան տերությունները հակադրված էին գոնե առերեւոյթ զբաղվելու իրենց քաղաքա-կանության հետեւանքով ծայր թշվառության մատնված ժողովուրդների հետագա

ճակատագրի հարցով: 1920 թվականի իր առաջին նստաշրջանից սկսած Ազգերի Լիգան զբաղվում էր հայ գաղթականության հարցով եւ հայտարարում, թե անհրաժեշտ է, որ բոլոր տերությունները միջոց ձեռնարկեն «ըստ կարելիվոյն շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգությանը»: Ազգերի լիգայի երկրորդ (1921թ.) եւ երրորդ (1922թ.) նստաշրջանները նորից միաձայն որոշում կայացրին հայ գաղթականների մասին: Դրան հաջորդեցին խաղաղության բանակցությունները Լոզանում, որտեղ հայ գաղթականության օգտին գրական ոչինչ չարվեց եւ այդ հարցը դարձյալ ձեւականորեն հանձնվեց Ազգերի լիգայի տնօրինությանը: Որոշվեց նրանց, ովքեր թուրքական կառավարությունը իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու արտոնություն չի տալիս, այլեւս թուրքահայատակներ չճանաչելով, պետք է տալ Լիգայի երաշխավորությունը վայելող մասնավոր անձնագրեր: Եւ կրկին պարզ է, այդ տերությունների նենգ քաղաքական խաղերը, ավելի ճիշտ կլինեք, թե Ազգային լիգան թուրքիային պարտադրե՞ր թույլ տալ տարագիր հայ ժողովուրդը վերադառնար իր տունը, քան նրանց հեռացնել իր հայրենիքից, չէ որ իրենք էին հայ ողբերգության իսկական ծրագրողները: Միջազգային անձնագրերը տրվում էին լիգայի գաղթականական գործերի մոկիսար Ֆրիտլոֆ Նանսենի նախագահությանը գործող կոմիտեի կողմից եւ հենց այդտեղից էլ դրանք ստացել էին «Նանսենյան» անունը: Դեռեւս 1923 թվականի աշնանը, Ազգերի լիգան որոշում էր կայացրել՝ ուսումնասիրել 50,000 հայ գաղթականների Անդրկովկասում, մասնավորապես հորհրդային Հայաստանում բնակեցնելու հնարավորությունը<sup>17</sup>:

1925 թ. հունվարի 17-ին Երեւան ժամանեց Նանսենի գլխավորած հանձնաժողովը, նույն օրը հանդիպելով հորհրդային Հայաստանի կառավարության հետ (Ս. Լուկաշին, Ս. Համբարձումյան, Ա. Մուսվյան եւ այլն), որը հավաստիացրեց Նանսենի հանձնաժողովին, որ լայն հնարավորություններ նրան հետաքրքրող բոլոր հարցերը ուսումնասիրելիս եւ տեղում ծանոթանալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել ներգաղթող սփյուռքահայ աշխատավորներին: Միաժամանակ հայտնվեց, որ այդ հողամասերի ոռոգման վերաբերյալ կան պատրաստի նախագծեր, որոնք նույնպես կտրամադրվեն հանձնաժողովին: Նանսենը նշեց, քանի որ գաղութահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել միայն հորհրդային Հայաստան, հետեւաբար պետք է հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը: Նանսենն ու նրան ուղեկցողները շրջեցին Հայաստանում, ծանոթացան երկրի կյանքին եւ հուլիսի սկզբներին վերադարձան Եվրոպա: Մեկնելուց առաջ, Նանսենը ներկայացրեց իր հանձնաժողովի մշակած հուշագիրը, ըստ այդմ, 50 հազար հայերի գաղթի համար նախատեսվում էր 8 միլիոն ուրբլի ձեռք բերելու

<sup>12</sup> - Ե. Կարինյան, Կենդրոնաձիգ եւ կեդրոնախույս, Փարիզ, 1925, էջ 5:

<sup>13</sup> - Նրանք այդ հակամարդհային ու հակահայ եւ հայահալած փորձառությունը գործադրեցին նաեւ Հայաստանի 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի ժամանակ ցախօր:

<sup>14</sup> - ՀՀ ՀՀՄԾ ՊԿԱ, Ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 10-11:

<sup>15</sup> - Հիշե՛ք 1988 թվականի երկրաշարժի աղետոյաններին օժանդակելու հանգանակված մեծ գումարների յուրացումը «Թեհրանի» եւ տեղերի «ազգայինների» կողմից:

<sup>16</sup> - ՀՀ ՀՀՄԾ ՊԿԱ, Ֆ. 113, ց. 3, գ. 305, թ. 30-40:

<sup>17</sup> - Հ. Ու. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները եւ Հայրենադարձությունը, Երեւան 1985, էջ 122:

հնարավորությունները: Միակ նպատակահարմար ելքը այդ անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին էր<sup>18</sup>:

1926 թվականի մարտի 19ին Փարիզում տեղի ունեցավ Ազգերի լիգայի կողմից ստեղծված հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը՝ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ս. Փիրումյանի մասնակցությամբ, որը եւ լիովին հաստատեց Նանսենի ծրագրի իրագործելի լինելը:

Սակայն, դժբախտաբար գնալով ավելի պարզ ու որոշակի դարձավ, որ ամեն անգամ, երբ գաղթականների հարցը քննարկվում էր Ազգերի լիգայում՝ Եվրոպական դիվանագետները «պիղատոսյան արցունքներ» էին թափում «դժբախտ ու շարշարված» հայ ժողովրդի կրած տառապանքների համար եւ խոսում նրան օգնելու «անհրաժեշտության» մասին, իսկ գործնականում շարունակում էին իրենց քաղաքական նենգ խաղերը:

Մոտ մի հնգամյակի ընթացքում (1925-1929թթ.) Նանսենին հաջողվեց հայ գաղթականների տեղափոխման եւ նախատեսված հողամասերի ոռոգման համար հավաքել հազիվ 1,6 միլիոն ուլբլի, աննշան մի գումար նման ձեռնարկի իրականացման համար:

Մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը եւ Նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո, հետո, Ազգերի լիգան այն մոռացության տվեց: 1929 թվականի աշնանը լիգայի ընդհանուր ժողովում Նանսենը առաջարկ մտցրեց՝ դադարեցնելու հայ գաղթականների հարցը անօգուտ կերպով հոլովելը: 1929 թ. սեպտ. 21-ին ընդհանուր ժողովը ստիպված էր ընդունել Նանսենի առաջարկը եւ տարիներ շարունակ լիգայի շրջանակներում անարդյունք կերպով արժարծված այդ հարցը հանվեց օրակարգից<sup>19</sup>:

Այսպիսով, Ազգերի լիգան «հայկական հարցը» փոխարինեց գաղթականության հարցով, իսկ այս հարցն էլ ստացավ այդպիսի ավարտ:

Հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ստեղծման ու ամրապնդման գործում կարեւոր դեր է խաղացել Հայաստանի Օգնության Կոմիտեն (ՀՕԿ-ը), որը կազմակերպվել էր 1921 թվականի սեպտեմբերին Երեւանում, նրա առաջին նախագահն էր Հովհաննես Թումանյանը, որը մասնաճյուղեր ստեղծեց Խորհրդային Միության հայաշատ քաղաքներում; Սակայն մինչեւ 1924 թ. սկսվեցին 20-րդ արտասահմանում գրեթե մասնաճյուղեր չունեցող եւ իր գործունեությունը հայկական գաղթօջախներում իրականացնում էր Հայրենիքի Օգնության Մարմնի (ՀՕՄ-ի), Հայոց Բարեգործական Ընդհանուր Միության եւ այլ կազմակերպությունների միջոցով: Այդ տեսակետից բացառություն էր կազմում միայն Պարսկաստանը, ուր Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչությունների ու հյուպատոսությունների տեղի առաջադիմանակ ուժերի

չանքերի շնորհիվ մասնաճյուղեր էին ստեղծվել դերեւս 1922թ. փետրվարին<sup>20</sup>:

1926-1929 թվականների ընթացքում Հունաստանից, Թուրքիայից եւ Ֆրանսիայից ներգաղթողների թիվը կազմեց 5,863 մարդ: Իսկ 1932-1933 թվականների ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից եւ Ֆրանսիայից ավելի կազմակերպված ձեռով Խորհրդային Հայաստան ներգաղթեցին շուրջ 8,007 հոգի: Ավելի քան 1,800 մարդ հայրենադարձվեցին Ֆրանսիայից 1936 թ.: Բացի մեծ խմբերով կատարված հայրենադարձությունից, 1926-1936 թվականների ընթացքում անհատական վիզաներով արտասահմանյան տարբեր երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեց 6,926 մարդ: (1926-1936թթ. ընդամենը 22,598 մարդ ներգաղթեց): Դրան ավելացնելով 1921-1925թթ. ներգաղթածներին (19,688) կարելի է ասել 1921-1936 թթ. ընթացքում օտարությունից հայերինք էին վերադարձել 42,286 հոգի:

